Azg Ազգ

Յուլիս 8 Հինգշաբթի 1993

ՈՍՍԿԵՎԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՐ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի, թիվ 128 (379)
գինը 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Քաղաքակիրթ

Վազգեն Մանուկյանը «դաշտոնազրկված» մեկնում է Փարիզ

Հայաստանի դաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի արձակուրդ գնալու հրամանից հետո նրա հրաժարականի մասին ոչտվող լուրերը օրեցօր ավելի միս ու արյուն են ստանում: Մեզ հասած խորհրդարանական տվյալների համաձայն, այսօր Վազգեն Մանուկյանն իրոք մեկ ուշաթով մեկնում է Փարիզ: Ըստ հավաստի աղբյուրների, այդ այցն իրոք կապված է նրա տրի ստուգման հետ, սակայն հայտնի է նաեւ, որ արձակուրդն իրոք հավասարազոր է հրաժարականի, քանի որ հանրապետության նախագահը ոչ միայն այլեւս վստահություն չի տածում «դատերազմում հաղթանակած» իր երբեմնի զինակցին ու ընդդիմախոսին, այլեւ ցանկանում է նրան Հայաստանից հեռացնել՝ նշանակելով որեւէ երկրում դեսպան: Քաղաքական դիտորդների կարծիքով, դեպքերի զարգացման ողջ ընթացքը կախված է Վազգեն Մանուկյանից, թե հրաժարականի ո՞ր ուղին նա կընտրի՝ հանգիստ արձակո՞ւրդը, թե՞ հերոսական հրաժարականը: Երեկ երեկոյան BBC ռադիոկայանի անգլիական բաժինը հաղորդեց, թե Վազգեն Մանուկյանը դաշտոնազրկված է, հենվելով երեւանում գտնվող իր թղթակցի հաղորդման վրա: Վերջինիս իր հերթին այս լուրը հաղորդել է «մի նախարար», նշելով, որ դաշտոնության նախարարի կուրսը հանձնվում է Հայաստանի կառավարության խաղաղարար քաղաքականությանը: «Ազգ»

Պատերազմ

ԱՍԿԵՐԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ԴԻՐՔԱՅԻՆ ՄԱՐՏԵՐ

Հուսեյնովն անշա՞նս է կազմակերպում ադրբեջանցիների հակագրոհը

Հուլիսի լույս 7-ի գիշեր եւ երեկ առավոտյան խորհրդարանը Լեռնային Ղարաբաղի Արեւելյան եւ Հյուսիս արեւելյան ռազմաճակատներում շարունակում էր մնալ լարված, թեեւ այստեղ ընթանում էին միայն դիրքային մարտեր: ԼՂՀ դաշտպանության բանակի կազմավորումները շարունակում են վստահաբեր վերահսկել Շելլի գյուղի մերձակա բարձունքները, որտեղից շարունակ հրետակոծվում էին Ստեփանակերտն ու մերձակա հայկական գյուղերը: Ադրբեջանական կազմավորումները ծանր հրետանուց եւ «Գրադ» կայանքներից հրետակոծել են հայկական դաշտպանական դիրքերը ռազմաճակատի գծի ամբողջ երկայնքով: Հայկական ուժերը դիմել են դաստախան գործողություններ: Ավելի վաղ՝ հուլիսի 6-ի երեկոյան հրետակոծվել էին ինչպես Ասկերանի, այնպես էլ Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերը, որի հետեւանքով կան զոհեր եւ վիրավորներ:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե իբր նախորդ գիշեր եւ երեկ առավոտյան ադրբեջանական կազմավորումներին հաջողվել է Աղդամի շրջանում ազատագրել եւս երկու գյուղ: Ըստ նույն աղբյուրների, Աղդամի շրջանում ռազմական գործողությունները անձամբ ղեկավարում է Ադրբեջանի վարչապետ Սուրաթ Հուսեյնովը: Այս առթիվ ԼՂՀ լրատվության եւ մամուլի տեղեկատվության ղեկավար Մարսել Պետրոսյանը Սնարի թղթակցին հայտնել է, թե Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցներն ըստ հերթության որոշել են փոխհատուցել վերջին օրերի պարտությունները լավատեսական հայտարարություններով: Նրա կարծիքով, նման աղաղակավորության նպատակը ազգային հերոս Սուրաթ Հուսեյնովի անվան շուրջ լեգենդ ստեղծելն է: Հետաքրքրական է, որ ադրբեջանական քարոզչական մեքենայի հերթական աղաղակավորությունն այս անգամ իրականացվում է այն ժամանակ, երբ ռազմաճակատներում հանգիստ հանգիստ է:

«Ազգ»

Հանրապետություն

Ալիեւը նախազգուշացնում է Էլչիբեյին

Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիեւը նախազգուշացրեց ժողովրդական ճակատի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին (որը ձեւականորեն նաեւ երկրի նախագահն է), այն դաստախանատվության մասին, որ նա կրում է ժողովրդական ճակատի զինվորական խմբավորումների առանձնացող գործունեության համար: Հոկտեմբերի, ԻԴ-ի թղթակցի հետ հարցազրույցում Ալիեւը հայտնեց, որ զինվորական խմբավորումները դիմել են ուժային միջոցների ընդդեմ օրինական իշխանությունների: Ըստ Ալիեւի, Էլչիբեյը ոչ միայն արհամարհեց այդ նախազգուշացումը, այլեւ իր աջակցությունը հայտնեց կողմնակիցների հանրահավաքներին: Ալիեւը համարում է, որ դրանով իսկ Էլչիբեյը խախտեց իր սեփական հրամանագիրը հանրաքվեությունում արտակարգ իրավիճակ մտցնելու եւ հանրահավաքներն արգելելու մասին:

Գնդակոծվել են Եղեգնաձորի եւ Արարատի դիրքերը

Հուլիսի 6-ի երեկոյան Նուխիջեւանի ուղղությամբ հրազգային զենքից գնդակոծվել են Արարատի շրջանի Երասխավանի եւ Եղեգնաձորի շրջանի Ելփին գյուղի հայկական դաշտպանական դիրքերը: Հայկական ուժերը դիմել են դաստախան գործողությունների: Այս մասին հաղորդում են Հայաստանի դաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Մեր կողմից տուժածներ չկան: Ինչ վերաբերում է սահմանամերձ մյուս շրջաններին, այդ այստեղ երեկ եւ նախորդ գիշեր ռազմական լուրջ միջադեպեր չեն արձանագրվել: Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի տարածքից զենքի տարբեր տեսակներից գնդակոծվել են Ադրբեջանի Գեռաբեկի, Զանգելանի եւ Ղուբաթլիի շրջանները, ինչպես նաեւ Նախիջեւանի ինքնավար հանրապետության տարածքը: Մարդասանություններ չեն հաղորդվում: «Ազգ»

Հայրենիք

Հայրիկյանը կրկին իր դերում, ժողովուրդը՝ իր

«Մենք դաշտանջում ենք ՀՀ նախագահի, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության հրաժարականը», սա էր այն հիմնական դաշտանջը, որ երեկ ԱԻՄ-ի կողմից հրավիրված հանրահավաքում առաջ քաշեց Պարույր Հայրիկյանը: Ի տարբերություն նախորդ հանրահավաքների, որոնց ժամանակ նախագահի հրաժարակոչից զատ դաշտանջվում էր նաեւ Սահմանադիր ժողովի միջոցով Սահմանադրության ընդունում, այս անգամ ԱԻՄ-ի հոնորարները հիմնականում ծանրացան Հայոց համազգային շարժման «ազգային» գործունեության եւ հանրաքվեության ղեկավարության հրաժարականի վրա:

▸ Տես էջ 2

Հանրապետություն

Շեւարդնաձե. Այս դաստերազմում մենք դեմ է հաղթենք

Այս դաստերազմում մենք դեմ է հաղթենք, եւ հաղթենք դաստվել, ասաց Էդուարդ Շեւարդնաձեն երեկ Սոչիում: Աբխազիայի Նախարարների խորհրդի եւ Գաբեստանության խորհրդի համատեղ ընդլայնված նիստում: Նա շարունակեց, թե մի անգամ չէ, որ ինքն զգուշացրել է անջատողականության վտանգի մասին, բայց համաշխարհային հանրությունը նոր է ըմբռնում այդ փաստը, գուցե որոշակի ուշացումով: Միեւնույն ժամանակ Շեւարդնաձեն այն միտքը հայտնեց, թե դաստերազմը Աբխազիայում իր դաժանագույն փուլն է թեւակոխել: Ողջ Վրաստանն այսօր դեմ է առջի դաստերազմական օրենքներով, իսկ ռազմական դաստախազությունը դյուրավոր է հետաքրքրել դասալիքներին, առանձնապես ոչ լուրջ տարածողներին: Պատերազմը մնում է դաստերազմ, ասաց Շեւարդնաձեն:

Վրաց-աբխազական բանակցություններում Աբխազիայի խորհրդարանի նախագահի անձնական ներկայացուցիչ Անրի Ջերգինիան Մոսկվայում իր հերթին հայտարարեց, թե կողմերին մնացել է համաձայնեցնել սոսկ մի քանի դրոցեղուային հարցեր, մասնավորապես այն, թե ով դեմ է դնի իր ստորագրությունը դայմանագրի տակ: Աբխազական կողմը համարում է, որ դայմանագիրը դեմ է ստորագրեն երկու դետությունների ղեկավարները, առանց Ջերգինիան: Ըստ նրա, աբխազական կողմն այդ փաստաթուղթը գնահատում է որպես միջանկյալ, եւ ստորագրելու է խուսափելու համար նոր մարդկային զոհերից: Ջերգինիայի խոսքերով, դայմանագիրը ենթադրում է վրացական զինուժի դուրս բերումը Աբխազիայից, նույնը վերաբերվում է նաեւ կամավորների այն ջոկատներին, որոնք կռվում են աբխազների կողմում:

Վրացական դաստվիրակության անդամներից մեկը, զրուցելով Բաստերֆախի թղթակցի հետ, դնդել է, որ այս ամենը փաստորեն նշանակում է Վրաստանի կոդիտուլյացիան:

Մինչդեռ ռազմաճակատում թեժ մարտերը շարունակվում են: Վրացական զորքերի մասնակի կենտրոնից հաստատեցին, որ վրացիները նահանջել են, բռնելով Ախալցեխի գյուղը: Միեւնույն ժամանակ աբխազական հրամանատարությունը հուլիսի 2-ից սկսած առնվազն չորրորդ անգամ անհաջող փորձում է դնանոց իջեցնել Թամբ գյուղի շրջակայքում, ինչը, ըստ վերոգնանների, վկայում է, որ նրանց ուժերը Օչամչիրի շրջանում ջլատվում են: «Ազգ»

Տոկիոյի գագաթաժողովում

Ընդհանրապես վերջադահությունների մթնոլորտում երեկ Ճապոնիայի մայրաքաղաքում բացվեց արդյունաբերական ամենազարգացած 7 երկրների ղեկավարների տնտեսական գագաթաժողովը: Մասնակից երկրներում տիրող գործազրկությունը, տնտեսական լճացումը, ինչպես նաեւ երկրներից ոմանց ներսում տիրող քաղաքական դժվարությունները աթիր են տվել մասնագետներին, որ «7 մեծերի» ժողովը կոչեն «7 ամենաչարների հանդիպում»: Առաջինը խոսեց Իյուրընկալ երկրի ղեսը՝ վարչապետ Միածավան: Այնուհետեւ խանդավառ ելույթ ունեցավ նախագահ Քլինթոնը, որ հայտնեց, թե գագաթաժողովը 3 կարեւորագույն հարց դետք է լուծի՝ տուկայական սահմանափակումների վերացում, արտադրական կարողությունների ածի հետ գործածության կրճատում եւ Ռուսաստանի նկատմամբ նախապես՝ սառը դատերազմի օրերին հասցված տեխնոլոգիական եւ գիտատեխնիկական արգելքների վերացում: Գագաթաժողովի ընթացքում որոշվեց տուկայական մուտքի հնարավորություն տալ իրար նկատմամբ, Ճապոնիան համաձայնվեց կրճատել արդանների նկատմամբ տուրքերը, նվազեցնել մաքսային տարիֆները ոչ միայն իրար նկատմամբ, ինչը կարող է հսկողության գրավական դառնալ առաջիկա դեկտեմբերի 14-ին Ուրուգվայում կայանալիք 100 երկրների համաժողովի համար:

Բաբանգիդայի հրասայլերը Լագոսում

Երրորդ օրը Նիգերիայում շարունակվեցին փողոցային խռովությունները երկրի զինված ուժերի հրամանատար Բաբանգիդայի հակաժողովրդավարական վերջին որոշման դեմ: Լագոսում երեկ տեղի ունեցած ցույցերին այս անգամ միջամտեց բանակը՝ ծանր գնդացիներով եւ հրասայլերով: Միայն այդ քաղաքում սպանված ցուցարարների թիվն անցնում է 25-ից: Գեներալ Բաբանգիդան երկրի գլխավոր երկու կուսակցություններին դայմանաժամ էր տվել մինչեւ այս առավոտ դաստասխանել, թե ընդունո՞ւմ են նախագահական նոր ընտրություններ անցկացնելու իր որոշումը: Մինչեւ ուշ գիշեր, մրցակից երկու կուսակցությունների դեսերը խորհրդակցում էին այդ հարցի շուրջ:

Բելգիացիները 60 հոգու են սպանել Սոմալիում

Օտարերկրյա լրագրողները երեկ հաղորդեցին Սոմալիում ՄԱԿ-ի խաղաղադահպանական ուժերի հետզհետե ավելի «ավազախմման» մասին: Նրանք բացահայտեցին, թե Բիսմայու նավահանգստում ծառայող բելգիական խաղաղադահպանական զորամիավորման զինվորներն անցնող 6 ամսվա ընթացքում այնտեղ սպանել են 60 սոմալիների, այդ թվում անզեն խաղաղաբնակների: ՄԱԿ-ի հրամանատարությունից կասկած հայտնեցին ներկայացված թվի մասին, սակայն ընդունեցին, որ բելգիացիները խժդժություններ արել են, եւ նրանց հարցը հետաքննության տակ է գտնվում: ▪

digitised by A.R.A.R.@

Ամերիկյան սենատորները նախագահի մոտ

Հուլիսի 7-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ընդունեց ԱՄՆ-ի սենատորների դեսական դաստվիրակությանը՝ սենատոր Ռիչարդ Գրենի գլխավորությամբ: Ողջունելով Հայաստանի իշխանությունների որդեգրած տնտեսական եւ քաղաքական սկզբունքները, սենատոր Ռիչարդ Գրենը հույս հայտնեց, որ հնարավոր է ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ազատ ասեւտրի դայմանագրի կնքումը, որն հնարավորություն կտա առագորեն վերակառուցել Հայաստանի տնտեսությունը: Այս գործընթացի իրականացմանը մեծապես կարող է նպաստել ամերիկայի հայ համայնքի գոյությունը: Հայտնելով իրենց իրազեկությունը երջափակման մեջ գտնվող Հայաստանի դժվարությունների մասին, սենատորներ Ռիչարդ Գրենը եւ Ջոն Մըրֆեյնը դաստասխանություն հայտնեցին անել ամեն ինչ, որդեսզի իրենց կառավարությունը առավելագույնս օգնի Հայաստանում առաջիկա ձմեռը համեմատաբար հեշտացնելու համար: ▪

Հանրապետություն

Բաքուն մոլորեցրել էր աշխարհին

Դեռեւս արդեն հայտնի է, երջան է ժամանում Լեռնային Ղարաբաղով զբաղվող ԵԱՀԽ Մինսկի խմբի դաստվիրակությունը նախագահ Մարիո Ռաֆաելլիի գլխավորությամբ: Դաստվիրակության կազմում կա 14 մարդ, դիվանագետներ, զինվորականներ, բարգմանիչներ, երեկ հայտնեց Հայաստանի արտգործնախարարության բանբեր Արամ Սաֆարյանը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունից երեւանում դաստվիրակությանը կմիանա ՄԱԿ-ի երեւանի գրասենյակի ղեկավար Թելմա Օկոն Սոլորզանոն, իսկ Բաքվում ՄԱԿ-ի Բաքվի գրասենյակի ղեկավար: Հուլիսի 9-ին խումբ կայցելի Բաքու, 10-ին՝ Երեւան, 11-ի երեկոյան՝ դարձյալ Բաքու, որդեսզի հուլիսի 12-ի առավոտյան Աղդամով հասնի Ստեփանակերտ: Արամ Սաֆարյանը տարակուսանք հայտնեց հուլիսի 3-ին եւ 4-ին Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցների տարածած այն լուրերի առթիվ, թե ԼՂՀ ինքնադաշտանության ուժերը գրավել են Աղդամը: Այդ լուրերը խոչընդոտներ ստեղծեցին հաշտության բանակցությունների վերսկսման ճանապարհին: Զանգվածային լրատվության միջոցները տարբեր կերդ մեկնաբանեցին այդ հաղորդումը, մոլորության մեջ գցելով համաշխարհային հանրությանը, այդ թվում Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆաելլին: Իրողությանը չհամապատասխանող այդ հաղորդումը 48 ժամ գտնվում էր համայն աշխարհի զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում: Միայն հուլիսի 5-ի կեսօրից հետո իրավիճակը դարզվեց: ՀՀ ԱԳՆ-ն դեսպերին իր գնահատականը տվեց, որդեսզի այսուհետեւ բացառվի հաղթական որոշումների ընդունումը խստուգված կամ ոչ հավաստի տվյալների հիման վրա: ԱԳՆ բանբերը նաեւ հայտնեց, որ դեսպան Մարիո Ռաֆաելլին հանդես է եկել շահագրգիռ կողմերին հասցեագրված հայտարարությամբ, այն ենթադրությունն արտահայտելով, թե Ադրբեջանում նոդասավոր իրավիճակի դեդքում հնարավոր կլինի Լ. Ղարաբաղին առնչվող անհետաձգելի միջոցառումների գրաֆիկի իրականացումն սկսել հուլիսի 13-ից: Դրանով իսկ բարարարվում է նաեւ մեկամսյա հետաձգման ԼՂՀ խնդրանքը: ՆՏ

Կարճ

Ընդունելություն ՀՀ փոխնախագահի մոտ

Հուլիսի 5-ին Հայաստանի փոխնախագահ Գագիկ Հարությունյանը ընդունեց Ֆրանսիայի ՌՊՌ կուսակցության երիտասարդական շարժման ղեկավար Վիգեն Բայրամյանին, որ Հայաստանում է գտնվում ՌԱԿ-ի հրավերով: Հանդիպման ընթացքում ՀՀ փոխնախագահը ներկայացրեց Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Զրույցին մասնակցեց ՌԱԿ Հանրապետական վարչության անդամ, Արմենակ երիտասարդական միության ատենապետ Հովհաննես Դուրգարյանը:

Հանդիպում ՀՌԱԿ գրասենյակում

Հուլիսի 6-ին ՌԱԿ Հանրապետական վարչության կենտրոնական գրասենյակում ատենապետ Ռուբեն Միրզախանյանը եւ փոխատենապետ Կարեն Կոստանդյանն ընդունեցին Բրդիսանի բանվորական կուսակցության պատվիրակությանը, վերջինիս խնդրանքով: Պատվիրակության կազմում էին կառավարության ղեկավարներ: Հանդիպմանը քննարկվեց երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Վահան Փափազյանը կհանդիպի Ռուրքն Քրիստոֆերի հետ

Ինչպես արդեն տեղեկացրել ենք «Ազգի» նախորդ հեռարձակներից մեկում, հուլիսի 15-ին ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը կմեկնի ԱՄՆ՝ պետքարտուղար Ռուրքն Քրիստոֆերի հրավերով: Այդ առթիվ ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը երեկ հայտնեց, թե հնարավոր է, որ նախարարը բացի Վաշինգտոնից այցելի նաեւ Նյու Յորք, ուր կհանդիպի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ: Նախատեսվում է, որ Վաշինգտոնում նախարար Վ. Փափազյանը կհանդիպի նաեւ ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գորի հետ, ԱՄՆ նախագահի նորանկախ հանրապետությունների եւ ազգային անվտանգության գծով խորհրդականների, էներգետիկայի եւ պաշտպանության քարտուղարների, ֆինансների եւ գյուղատնտեսության նախարարների հետ: Սամուլի քարտուղարի ասելով, այցը կտեւի 1 շաբաթ եւ նախարարն ըստ երեւույթին չի հասցնի մեծ հանդիպումներ ունենալ հայ համայնքի հետ:

Մինչ այդ, երեկ Վ. Փափազյանը ընդունեց ԱՄՆ սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամներ Բրաունին եւ Մակֆիլինին: Վերջիններս եղել են Հարավսլավիայում եւ Ուկրաինայում, իսկ այժմ ցանկություն ունեն ծանոթանալ Հայաստանում եւ շրջանում տիրող իրավիճակին: «Ազգ»

Տնտեսություն

Զգուշացեք կեղծ դոլլարներից

Ռուսաստանի ՆԳՆ տվյալներով, վերջին 5 տարիների ընթացքում 4,5 անգամ աճել է դրամանիշերի, արժեթղթերի եւ օտարերկրյա տարադրամի կեղծման եւ վաճառքի փորձերի թիվը, իսկ ընթացիկ տարվա 5 ամիսների ընթացքում գրեթե 1,5 անգամ: Միայն 1993 թ. շրջանառությունից հանվել են ավելի քան 20 միլիոն ռուբլու կեղծ դրամանիշեր, 19 միլիոն ռուբլու վաուչերներ, 500 հազար դոլլարի օտարերկրյա տարադրամ: Ամեն օր գրանցվում է կեղծ ռուբլիների վաճառքի 10 փաստ, իսկ հայտնաբերումը կազմում է մոտ 12 տոկոս: Ներկայումս 10 կեղծ դրամանիշներից 9-ը պատրաստվում է պատճենահանման մեթենայով: Ինչ վերաբերում է կեղծ դոլլարներին, արդա ներքին գործերի նախարարության փորձաքրեագիտական ծառայության կողմից հետազոտված 23 հազար արժեթղթերի կեսը կեղծ էր: Փորձագետների կարծիքով, դոլլարի իսկությունը ստուգելու ամենահեշտ ձեւն է խել այն անհարթ թղթով: Իսկական դոլլարը գունավոր հետք է թողնում: Այն նաեւ ճչվում է մագնիսով: Սնարք

Հեռուստ

ՀԱՅՐԻԿՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԻՐ ԴԵՐՈՒՄ, ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ԻՐ

Սկիզբը էջ 1

Անկախության հրապարակում հավաքված 8-10 հազար երեւանցիներ նախ լսեցին, թե ինչպիսի սպառնալիքներ են կազմակերպել ՀՀՇ-ականները ԱԻՄ-ի հանրահավաքը խոչընդոտելու նպատակով: Ակած այն բանից, որ 60 հազար տոմսաթանակով տարածել են «Անկախություն» թերթի նման մի թռուցիկ, ուր հանրահավաքի վայրը մի այլ տեղ էր նշվում, եւ վերջացրած Ամենայն Հայոց Հայրապետի պատգամով, որ ոչ մի հոգեւորական չմասնակցի ԱԻՄ-ի հանրահավաքին: Իր կողմից երեւանի քաղաքապետարանն էլ տեղեկացրել է ԱԻՄ-ի վարչությանը, թե հանրահավաքի անցկացումը արգելվում է: Սակայն, չվախենալով ոչ մի խոչընդոտից, Պարույր Հայրիկյանը հայտարարեց, որ ներկա իշխանությունները խաբել են ժողովրդին, այժմ պետք է խլեն տեղը գիշեր, քանի որ ազգը բարոյապես մահանում է: Միեւնույն ժամանակ ԱԻՄ-ի առաջնորդը ներկաներին զգուշացրեց, որ իշխանությունների հրաժարականը դահանջելու ճանապարհին ոչ մի բռնություն չպետք է կիրառվի: Եւ երբ հրապարակի կենտրոնում հավաքված մարդիկ միահամուռ դահանջեցին ՀՀ նախագահի հրաժարականը, արդա ծառերի հովանու տակ կանգնածները ընդամենը «ձայնակցեցին» իրենց լռությամբ: Հանրահավաքի մասնակիցներից շատերը մեզ հետ զրուցելիս խոստովանեցին, որ իրենք նույնպես դեմ են ՀՀՇ-ին, Լեւոն Տեր-Պետրոսյանին, կողմ են նոր հրաժարականին, բայց ոչ Հայրիկյանի իշխանության անցնելու գնով: «Ես Հայրիկյանին անգամ բաժնի վարիչ չէի նշանակի, ո՞ւր մնաց թե նախագահ», ասաց զրուցակիցներից մեկը:

Մի ժամ Անկախության հրապարակում մնալուց հետո հանրահավաքի մասնակիցները շարժվեցին դեպի ոստիկաններով շրջապատված նախագահական շենք, կրկին վանկարկելով Տեր-Պետրոսյանի հրաժարականը: Եւ այսպես շարունակ... Հայրիկյանը կրկին իր դերում էր, ժողովուրդը կրկին հիասթափության շեմին: Ա. Հ.

Մոսկվա

Հայաստանին օգնելը առաջնահերթ խնդիր

Մոսկվայի նորաստեղծ Հայկական համագումարն արդեն սկսել է իր եռանդուն գործունեությունը: Նախագահի ընտրությունից հետո նախագահ դարձավ ծնունդով ստեփանավանցի, 40-ամյա ձեռներեց եւ մեկենաս Սերժ Ջիլավյանը: Ընտրվեց նախագահական խորհուրդը, որի կազմի մեջ մտան նախագահի տեղակալները, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարները: Մոսկվայում գոյություն ունեցող բոլոր անջատ կազմակերպությունները միավորվեցին Համագումարի մեջ, դրանց ղեկավարները մտան նախագահական խորհրդի մեջ, գլխավորեցին տարբեր հանձնաժողովներ, ընկերություններ եւ գործադիր մարմիններ: Այսպիսով, ձեռք բերվեց Համագումարի կանոնադրության մեջ հոչակված նպատակը, այն է՝ միավորել եւ համակարգել մոսկովյան ողջ համայնքի գործունեությունը:

Թղթակցի հարցին, թե Համագումարի առջեւ ծառացած բազմաբիվ խնդիրներից ո՞րն է առաջնահերթ, Սերժ Ջիլավյանը պատասխանեց. «Հայաստանի խնդիրները համազգային խնդիրներ են, եւ մենք չենք կարող դրանցից հեռու մնալ: Առաջին հերթին մենք պետք է օգնություն ցույց տանք Հայաստանին եւ կանենք ամեն հնարավոր բան եկող ձմռանը մարդկանց կյանքի պայմանները բերեւացնելու: Դրա համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է սերտ կապեր հաստատել Հայաստանի ղեկավարության հետ: Մենք համակ ենք հղել նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որում առաջարկել ենք մեր նյութական եւ մտավոր կարողություններն ի սպաս դնել ճգնաժամը հաղթահարելու գործում: Հույս ունենք, որ հայ ժողովրդի համախմբման եւ միասնականացման մեր նախաձեռնությունն ու ձգտումը ընթացքում կընդունվեն ոչ միայն արտաքին իրավիճակների պետվարության լրատվության եւ արտաքին կապերի բաժնի ղեկավար Ալեքսանդր Սելիվանովը, Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվայի համաժողովի օրակարգում մտցվել է ՀՀ հիշյալ պետվարության մշակած «Արեգ» ծրագիրն համապատասխան Հայաստանին օգնություն ցույց տալու հարցը: Հայաստանին հատկացվելիք օգնության ծեւերը, բովանդակությունը եւ չափերը կսահմանվեն հոկտեմբերին Մոսկվայում: Սնարք

Մարթայի Վալեցա քաղաքում ավարտվեց բնական ու տեխնոլոգիական խոշոր աղետները կանխելու, դրանցից պաշտպանվելու եւ օգնություն ցույց տալու Եվրախորհրդի մասնակի բաց համաձայնագրի ժբտական ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումը: Դա ընթացքում քննարկվում էր այդ կազմակերպության նախարարների կոմիտեի հոկտեմբերի 1-2-ը Մոսկվայում կայանալիք նիստի ծրագիրը: Ինչպես Սնարքի թղթակցին հայտնեց Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից, Հայաստանի ներկայացուցիչը հանդես կգա զեկուցմամբ: Հայաստանի հանդեպ ցուցաբերվող օգնության ծեւերը, բովանդակությունը եւ չափերը կսահմանվեն հոկտեմբերին Մոսկվայում: Սնարք

Մոսկվա

Նոր անձնագրերում գրել նաեւ ռուսերեն

Հուլիսի 6-ին ԳԻՀ նիստի իր ելույթում ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժնի պետ Յուրի Ավետիսյանը հայտնեց, որ ՀՀ քաղաքացիների անձնագրերը լիովին համապատասխանում են 1986 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված միջազգային նորմերին, մեքենայակարդացվող են (ի դեպ ՀՀ-ն 8-րդ երկիրն է աշխարհում, որ կունենա այդ տիպի անձնագրեր), լրացված կլինեն հայերեն եւ անգլերեն, կգործեն ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում: Պ. Ավետիսյանը նշեց, որ ԱՊՀ երկրների ղեկավարների առաջիկա հանդիպմանը Երեւանում առաջարկ կարվի նոր անձնագրերին կից ռուսերեն ներդիրներ ունենալ: Եթե այն ընդունվի, արդա, ինչպես ԱՊՀ մյուս երկրների, այնպես էլ ՀՀ անձնագրերը կլինեն ռուսերեն լրացված, կունենան միասնական կարգով սահմանված ներդիրներ: ՆՏ

Հայաստանի էներգետիկայի եւ վառելիքի նախարարի տեղակալ Կարեն Գալստյանը հուլիսի 6-ին մեկնել է Վաշինգտոն Համաշխարհային բանկի խորհրդակցությանը մասնակցելու նպատակով: ԻԲ-ին այդ առթիվ էներգետիկայի եւ վառելիքի նախարարությունից հաղորդել են, որ խորհրդակցության ժամանակ կքննարկվի Հայաստանին 20 մլն. դոլլար տրամադրելու հարցը էներգամատակարարման տեխնիկական օգնության եւ այլ ծրագրերի իրականացման համար: «Ազգ»

Տնտեսություն

Եվրահամայնքի օգնությունը նաեւ Երեւանին

«Ազնավուր Հայաստանին» կազմակերպության երեւանյան գրասենյակից տեղեկացրին, որ Եվրահամայնքի օգնությունը 20 կգ-անոց 50 հազ. արկղեր են, որոնք պարունակում են այլուր, օճառ, լվացքի փոշի, մսի պահածո եւ այլն: Այդ արկղերի տեղափոխումը իրականացնում է «Ազնավուր Հայաստանին» հիմնադրամը: Բեռը բեռնատարներով հասցվում է Սոչի, որտեղից ներկայումս օրական 1-2 իմքնաթիռներով տեղափոխվում է Երեւան: Մինչ այժմ տեղափոխվել է մոտ 9 իմքնաթիռ բեռ: Ընդհանուր առմամբ բեռների տեղափոխումը նախատեսվում է մոտ 20 իմքնաթիռով: Թե ինչպես է բաշխվելու եւ հասցեագրվելու օգնությունը, որոշելու է «Ազնավուր Հայաստանին» կազմակերպությունը կառավարության մարմինների եւ տեղական իշխանությունների հետ: Նախատեսվում է, որ այն կհասկացվի աղեղի գոտուն, գնդակոծություններից տուժած սահմանամերձ շրջաններին եւ 50 տոկոսի չափով նաեւ Երեւանին: Ինչպես հայտնի է դարձել, 3-ից ավելի երեխա ունեցող ընտանիքների ցուցակագրումն արդեն ավարտվում է: ՆՏ

Բոլոր

Ալիեւը Մամեդովին հրավիրում է համագործակցության

Ազգային անկախություն կուսակցության ղեկավարությանը մոտ աղբյուրներից հայտնի դարձավ, որ Հեյդար Ալիեւը համագործակցության առաջարկով դիմել է կուսակցության նախագահ Թոքիբաշ Մամեդովին: Տեղական դիտորդների կարծիքով, փորձված գործչի այդ քայլը պայմանավորված է Ազգային անկախություն կուսակցության շարքերում Ալիեւի հետ դաշնակցական կապերի խզման միտումով: Մասնավորապես դրա մասին է վկայում կուսակցության դիմումը Միլլի մեջլիսին, որում մայիսի 26-ից արտակարգ դրության ժամկետի երկարաձգումը որակավորվում է որպես հակաօրինական: Միեւնույն ժամանակ օրերս Մամեդովը հայտարարել էր, որ էլչիբեյը կարող է վերադառնալ Բաքու եւ սանձնել երկրի ղեկավարությունը: Դիտորդների կարծիքով, այդպիսի շրջադարձը կուսակցության ներքին քաղաքականությունում պայմանավորված է նրանով, որ Մամեդովը չստացավ կառավարության ղեկավարի պաշտոնը: ԻՖ

Նախարար Կարաեւը վերսկսեց աշխատանքը

Ադրբեջանի արտաքին տնտեսական կապերի նախարար Ռաուֆ Կարաեւը, որն իր գործունեությունը դադարեցրել էր բողոքելով Աբուլֆազ Էլչիբեյին նախագահական լիազորություններից զրկելու Միլլի մեջլիսի որոշման դեմ, հուլիսի 5-ից վերսկսել է աշխատանքը: Թուրան գործակալությանը տված հարցազրույցում նա իր քայլը հիմնավորեց այն բանով, որ ինքը տեղեկություններ է ստացել, թե բացակայության օրերին փորձեր են արվել նախարարությունում «անցկացնել» մի քանի պայմանագիր ու գործարք, որոնք կարող են վնաս հասցնել Ադրբեջանի տնտեսությանը: «Եւ քանի որ ես մնում եմ նախարար, չէի ուզենա, որ դա կարդային իմ անվան հետ», ասաց նա: Կարաեւը հայտնեց, որ իր բացակայության օրերին առաջին փոխնախարար Աբուլֆազ Մուսաեւը ստորագրել է հինգ հազար տոննա դիզելային վառելիքի վաճառքի արտոնագիր: Բացի դրանից, կարաեւի տեղեկությունների համաձայն, նկատվել է կասկածելի գործարք «մի ընկերակցության միջոցով», որը նախատեսում էր 60 միլիոն դոլլարի նավթաթերք փոխանակել համաշխարհային գներով ամերիկյան կամ կանադական ցորենի եւ այլուրի հետ: Աշխատանքը վերսկսելուց անմիջապես հետո նախարարը հանձնախումբ նշանակեց այդ երկու պայմանագրերի տնտեսագիտական փորձաքննության համար: Շարունակելով պարզաբանել իր որոշման պատճառները, Կարաեւը նաեւ նշեց, որ ինքը բոլոր հիմքերն ունի երկյուղելու հանրապետությունում տարադրամի ներհոսի կրճատման առնչությամբ, մի բան, որ նրա կարծիքով, «բնավ չի կարելի թույլ տալ»: Սնարք-Թասաք

ԱՄՆ-ում հետեւում են ադրբեջանցիների նահանջին

Աղդամում կրած պարտությունն էլ ավելի բարդացրեց ադրբեջանական բանակին, որտեղ արդեն վաղուց նկատելի են կարգապահության անկումը եւ դասալքության աճը. Աղդամից հուլիսի 6-ին հաղորդել է «Վաշինգտոն թայմզ»-ի թղթակից Թոմաս Գինզբերգը: Բուն քաղաքում մնացել են միայն երկու տանկ, մեկ զրահամեքենա եւ մի քանի զինվոր: Արեւելքում դեռեւս ազատ միակ ճանապարհը լի է փախստականներով եւ նահանջող զինվորներով: «Երեւանում պաշտոնական անձինք հայտարարում են, թե իրենք չեն վերահսկում Ղարաբաղը, իսկ ղարաբաղցի հայերը պնդում են, թե իրենց նպատակը ոչ թե Աղդամի գրավումն է, այլ այն կրակակետերի ոչնչացումը, որոնցից գնդակոծվում էր Ղարաբաղը: Չնայած Սուրաթ Հուսեյնովի ռազմաբուն կոչերին, ադրբեջանցի զինվորները տրամադրված են հոսեբեսորեն», հաղորդում է թերթը: «Հայերը շատ ուժեղ են, մենք կորցրել ենք հույսը, մեր կարգապահությունը զրոյական է», թղթակցին ասել է մայոր Թոմաս Ալիեւը շրջապատված Թիզուլիում: «Նյու Յորք թայմզը» հուլիսի 6-ին մեջբերել է Աղդամի քաղաքապետի խոսքերը. «Երեւի հայերն ուզում են երկրորդ մարդասիրական միջանցքը բացել մինչեւ կասպից ծով, որպեսզի ապահովեն սեւ ծկնկիթի մատակարարումը Ղարաբաղին»: Սնարք

digitised by A.R.A.R.@

Մտորումներ

ՎԱՆ ԲԱՅՐՈՒՐՅԱՆ (*«Վրաստան» թերթի խմբագիր, Թբիլիսիի Հայ մշակութային բարեգործական ընկերության նախագահ*). Այն դայմանագիրը, որ դեռ կնքվեր Հայաստանի վարչապետի այցի ժամանակ Թբիլիսիում չկնքվեց, քանի որ կային մի քանի սինճեի հարցեր: Եվ ահա երկու երկրների դեսպանները էլ գնացին փոխզիջման, և Նինոծմինդայում ստորագրվեց այդ դայմանագիրը, որով մամլամտը Հայաստանի և Վրաստանի միջև Ժդանովկայում դարձավ բավականին: Առաջին անգամ այստեղի միջազգային փաստաթուղթ ստորագրվեց երկու երկրների միջև: Միայն թե այդ դայմանագիրը աշխատի, քանի որ մենք ունենք փաստեր, որ օրենքները չեն աշխատում, դայմանագրերը չեն կատարվում: Եվ այդ դայմանագիրը կարող է չաշխատել: Ջավախքում կան ուժեր, որոնք ուզում են, որպեսզի Հայաստանի և Վրաստանի միջև այդ կետում ընդհանրապես մամլամտը չլինի: Իհարկե, դա շատ հիանալի կլիներ: Բայց քանի որ այսօր Հայաստանը և Վրաստանն անկախ դետություններ են, ուստի դեռ է ունենան և իրենց սահմանապահները, և իրենց մամլամտները: Իմ կարծիքով, այսօրվա դայմաններում մամլամտը չունենալը սխալ կլիներ:

Առաջինը Հայաստանը Բավրայում մամլամտը դրեց մեկուկես տարի առաջ: Մինչև Վրաստանը այդ կետում Ժդանովկայի մամլամտը բացեց առավել 2-3 ամիս առաջ: Այստեղ քաղաքացիների անձնական մեքենաների ստուգումը կկրի ձևական բնույթ: Ստուգում են միայն թմրադեղեր և զենք: Մամլամտի կվճարեն միայն մեծ քանակությամբ բեռներ տեղափոխելիս: Գիտեմ, որ ցավախքցիների մի մասը այսօր աղում է Հայաստանում, և Վրաստանում բնակվող հայի համար ստուգումներով հասել Հայաստանի և Վրաստանի սահմանը հոգեբանորեն դժվար է ընդունել: Ես էլ ընդունում եմ, բայց տրով չեմ կարող ընդունել այդ փաստը: Հասարակ ժողովրդի համար սա դժվար խնդիր է: Ուստի մամլամտը ժողովրդի համար դեռ է լինի բավականին դրդիչ, արդյունաբերական բեռների համար խիստ: Այստեղ հարվի են առնված և Հայաստանի և Վրաստանի շահերը:

Մյուս կողմից, մինչև մամլամտը գալը ճանապարհային ոստիկանությունը բալանում է ժողովրդին: Ասենք, դանիր է տանում, ասում են՝ մի քիչ դանիր տար, գալիս չունես մի քիչ բենզին տար: Իսկ բենզինի մեկ լիտրը Հայաստանում այսօր արժե 1000 ռուբլի, Թբիլիսիում 800-900 ռուբլի: Ինչ խոսք, վիճակն ահավոր է, սակայն դա այսօր վերահսկել հնարավոր չէ, քանի որ դեղությունները նոր են ստեղծվում, և նրանց համար դրա կանխումը միանգամից շատ դժվար է:

Ես մամլային գործի մասնագետ չեմ, բայց գիտեմ, որ ցանկացած քաղաքակիրթ երկիր ունի մամլամտում: Այնպես որ մամլամտում ունենալը ամենատվության նշան չէ:

ԺՈՐԱ ՄՆԱՑԱԿԱՆ (*Նինոծմինդայի շրջանի Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի դասագիտական կարծիքը*). Ես կարծում եմ, որ ցանկացած քաղաքակիրթ դետություն դարտադիր դեռ է ունենա մամլամտում: Հայ և վրաց ժողովուրդները դարերով սահմանն չեն ունեցել, այսօր աշխարհն հն ունենալ, որտեղ դեռ է ունենան նաև մամլամտներ: Սակայն մամլամտի գոյության փաստը, կարված այլևայլ հարցերի հետ, մի փոքր բարդանում է: Ժողովուրդը դա հիվանդագին է ընդունում, քանի որ շրջանի բնակչության զգալի մասն աղում է Հայաստանում: Նրանք կարծում են, թե մամլամտով նույնիսկ որևէ բեռ թե տեղափոխելն անհնար է դառնում: Եվ ահա մեր շրջանում երկու երկրների մամլամտների ղեկավարները ստորագրեցին փաստաթուղթ, որի կետերից մեկը վերաբերում է Վրաստանի նավահանգիստներից Հայաստանի հացահատիկի ստացմանը: Ըստ այդ դայմանագրի, հացահատիկը տեղավորվելու է Ջավախք-Աշոցք ճանապարհով՝ առանց որևէ մամլամտարի: Այնպես որ մամլամտի գոյության մեջ ինչ-ինչ վտանգներ փնտրելն անիմաստ է: Հարցը բարդանում է այն դասճառով, որ ճանապարհներում կան մի քանի դահակային ծառայություններ: Ժողովրդի մեջ կա այն սխալ կարծիքը, որ գծային ու տեղական ոստիկանությունները դատկանում են մամլամտին: Մամլամտը տեղադրված է Ժդանովկա գյուղում (միայն մի վագոնում), որ դեռ է ստուգեն բեռները: Իսկ գծային ու տեղական ոստիկանությունները բեռները ստուգելու իրավունք չունեն, կարող են ստուգել միմիայն փաստաթղթերի օրինականությունը: Այդ շիլաափորը, որ ստեղծվել է երեք խումբ ոստիկանությունների միջև՝ գծային, տեղական և մամլային, որը նոր է ձևավորվում, թյուրիմացություն է ստեղծել:

Իմ տեսակետն այն է, որ Հայաստանի և Վրաստանի հարաբերությունները այնքան դարզ դեռ է լինեն, որդեսզի դրանց չխանգարեն ոչ մամլամտները, ոչ էլ ոստիկանությունը: Մամլամտն գոյության փաստը արդարացվում է այն իմաստով, որ սահմաններում անդրայման դեռ է վերահսկողություն:

ՄԵՐՈՒԺԱՆ ԳՈՔՈՐՅԱՆ (*Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ*). Պարոն Գոքորյանը չցանկանալով երկար-բարակ դատախոսել հարցերիս մասնացույց արեց «Վրաստան» թերթը, որտեղ զետեղված էր իր տեսակետը մամլամտի գոյության վերաբերյալ, որն էլ ներկայացնում ենք մասնակի կրճատումներով:

Սահմանների ստեղծումը, սահմանի մասին օրենքի, մամլային կանոնների ընդունումը կարևոր և անհրաժեշտ գործ է ցանկացած դետության համար: Բայց ողջ դժբախտությունն այն է, որ բնակչությունը, ըստ էության, դեռ գլուխ չի հասել այդ օրենքներից, չի դատկերացնում, թե ինչդես կարելի է երկու մասի բաժանող գիծ քաշել Վրաստանի և Հայաստանի միջև, որոնց բնակիչները դարեդար աղրել են անբաժան, հաշտ ու խաղաղ. բարեկամաբար, կատարելով մի ընդհանուր գործ: Մեսխեթ-ջավախեցի մեր հայրենակիցները սովորել ու սովորում են հարեան Հայաստանում, միասին աշխատում, առևտուր են անում, կիսում վիշտ ու ուրախություն, ու հանկարծ... սահմանագիծ: Կարելի է ամենայն հանգստությամբ ասել, որ շատ սահմանապահներ, մամլային ծառայության աշխատողներ նույնդես իրենց համար լրիվ չեն դարզել սահմանի նշանակությունը, լավ չգիտեն իրենց իրավունքներն ու դարտականությունները, դրանցից ոմանք էլ ցանկանում են անագնիվ ճանապարհով հարստանալ:

Այո, մամլամտներն իրենց օրենքներն ունեն, երբեմն բավականին խիստ օրենքներ: Բայց չի եղել և չկա այնդիսի օրենք, որ բացառություններ չունենա: Մեր հանրապետությունների մամլամտային մասին օրենքներն էլ դեռ է գոնե մեկ բացառություն ունենան: Եվ այդ բացառությունը դեռ է արտահայտի մեր երկու եղբայր ժողովուրդների կամքը, այն է՝ բարեկամության անել և համագործակցել:

Հունիսի 24-ին Նինոծմինդայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ջավախքում գործող հասարակական կազմակերդություններից թերևս ամենաակտիվը՝ «Ջավախք» ժողովրդական շարժումը, ինչդես նաև Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ Ժդանովկայում մամլամտ բացելուն դեմ են արտահայտվել: Միաժամանակ, ոչ դաշտոնական աղբյուրներից տեղեկացանք, որ ՋԺՇ-ի նախագահ Խաչատուր Մամիկոնյանի և Մերուժան Գոքորյանի ներկայությամբ այդ օրը Նինոծմինդայում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել: Մինչդեռ Վան Բայբուրյանի և Ժորա Սնխչյանի մեկնաբանություններն այլ բան են ասում:

Պետք է կարծել, որ եթե այդ օրը Նինոծմինդայում փաստաթուղթ է ստորագրվել, առյա՝ հանդիպումից հետո առանց «խանգարողների»: Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավարների ու ՋԺՇ-ի մասնակցությամբ:

Խմբագրության կողմից. Ինչդես հայտնի է, իրոք Նինոծմինդայի հանդիպման ժամանակ երկու երկրների մամլային ծառայությունների միջև համաձայնագիր չի ստորագրվել: Պարզապես նավորվածություն է ձեռք բերվել նոր հանդիպման:

ՄԻՍԱՔ ՁՈՐՈՍՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Ջավախք

ԱՐԺԵ՞ ԺԴԱՆՈՎԿԱՅՈՒՄ ՄԱՔՍԱՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Մայիսի վերջերին Նինոծմինդայի շրջանի Ժդանովկա գյուղում (Հայաստանի և Վրաստանի սահմանում) տեղի ունեցած միջադեպին հաջորդեց հունիսի 24-ին Նինոծմինդայի երկու երկրների մամլային վարչությունների ղեկավարած դատվիրակությունների հանդիպումը, որտեղ ենթարկվեցին մամլամտ հետ կապված հարցեր: Հայաստանի դատվիրակությունը ղեկավարում էր Հայաստանի մամլային վարչության դետ երջանիկ Աբգարյանը, իսկ վրացական դատվիրակությունը՝ Իրակլի Քադակաշվիլին: Հանդիպման մասնակիցներից երեքին խնդրեցի մեկնաբանել այդ հանդիպման արդյունները և իրենց տեսակետն արտահայտել մամլամտ գոյության վերաբերյալ:

Պարոն Գոքորյանը չցանկանալով երկար-բարակ դատախոսել հարցերիս մասնացույց արեց «Վրաստան» թերթը, որտեղ զետեղված էր իր տեսակետը մամլամտ գոյության վերաբերյալ, որն էլ ներկայացնում ենք մասնակի կրճատումներով:

Սահմանների ստեղծումը, սահմանի մասին օրենքի, մամլային կանոնների ընդունումը կարևոր և անհրաժեշտ գործ է ցանկացած դետության համար: Բայց ողջ դժբախտությունն այն է, որ բնակչությունը, ըստ էության, դեռ գլուխ չի հասել այդ օրենքներից, չի դատկերացնում, թե ինչդես կարելի է երկու մասի բաժանող գիծ քաշել Վրաստանի և Հայաստանի միջև, որոնց բնակիչները դարեդար աղրել են անբաժան, հաշտ ու խաղաղ. բարեկամաբար, կատարելով մի ընդհանուր գործ: Մեսխեթ-ջավախեցի մեր հայրենակիցները սովորել ու սովորում են հարեան Հայաստանում, միասին աշխատում, առևտուր են անում, կիսում վիշտ ու ուրախություն, ու հանկարծ... սահմանագիծ: Կարելի է ամենայն հանգստությամբ ասել, որ շատ սահմանապահներ, մամլային ծառայության աշխատողներ նույնդես իրենց համար լրիվ չեն դարզել սահմանի նշանակությունը, լավ չգիտեն իրենց իրավունքներն ու դարտականությունները, դրանցից ոմանք էլ ցանկանում են անագնիվ ճանապարհով հարստանալ:

Այո, մամլամտներն իրենց օրենքներն ունեն, երբեմն բավականին խիստ օրենքներ: Բայց չի եղել և չկա այնդիսի օրենք, որ բացառություններ չունենա: Մեր հանրապետությունների մամլամտային մասին օրենքներն էլ դեռ է գոնե մեկ բացառություն ունենան: Եվ այդ բացառությունը դեռ է արտահայտի մեր երկու եղբայր ժողովուրդների կամքը, այն է՝ բարեկամության անել և համագործակցել:

Հունիսի 24-ին Նինոծմինդայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ջավախքում գործող հասարակական կազմակերդություններից թերևս ամենաակտիվը՝ «Ջավախք» ժողովրդական շարժումը, ինչդես նաև Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ Ժդանովկայում մամլամտ բացելուն դեմ են արտահայտվել: Միաժամանակ, ոչ դաշտոնական աղբյուրներից տեղեկացանք, որ ՋԺՇ-ի նախագահ Խաչատուր Մամիկոնյանի և Մերուժան Գոքորյանի ներկայությամբ այդ օրը Նինոծմինդայում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել: Մինչդեռ Վան Բայբուրյանի և Ժորա Սնխչյանի մեկնաբանություններն այլ բան են ասում:

Պետք է կարծել, որ եթե այդ օրը Նինոծմինդայում փաստաթուղթ է ստորագրվել, առյա՝ հանդիպումից հետո առանց «խանգարողների»: Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավարների ու ՋԺՇ-ի մասնակցությամբ:

Խմբագրության կողմից. Ինչդես հայտնի է, իրոք Նինոծմինդայի հանդիպման ժամանակ երկու երկրների մամլային ծառայությունների միջև համաձայնագիր չի ստորագրվել: Պարզապես նավորվածություն է ձեռք բերվել նոր հանդիպման:

ՄԻՍԱՔ ՁՈՐՈՍՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Ջավախք

Էկոդրեսս

Արևմտյան Եվրոդայի բոլոր երկրներում ստույգմամբ ծառացել է ներգաղթի խնդիրը

Չէ՞ որ դա նշանակում է նաև նոր բացվող աշխատատեղերի գրաքում, բնակարանի ձեռքբերում, դրանցքան նդատներ: Միայն այս տարվա փետրվարին ԳՖՀ-ն են տեղափոխվել տարբ 13 հազար ռուսներ (հիմնականում գնչուներ), 6 հազար հարավսլավներ, 4 հազար բուլդարացիներ, 2 հազար բուրներ, 1.5 հազար նախկին ԽՍՀՄ հանրապետություններից և բազմաթիվ ալժիրցիներ, վիետնամցիներ, չինացիներ, ալբանացիներ: Եթե տան հաշիվենք նաև զարտուղի ճանապարհով մուտք գործողներին, ապա այդ թվերը դեռ է կրկնապատկվեն, գուցե նաև եռապատկվեն: Ի հետևանք Բունդեսթագը սահմանադրության 16-դ հոդվածում ուղղում է մտցրել, որով խստացվում են ներգաղթողներին ընդունելու կանոնները, բնակության իրավունք տալով միայն քաղաքական դդդատաստանների հետապնդվողներին:

Ոչ մի սնանկ ձեռնարկությո՞ւն

Վերջին տարիներին նկատվում է ֆինանսական և իրավաբանական անձանց անվճարունակության աճի միտում: Սակայն որքան էլ տարօրինակ է, առայժմ ԱՊՀ-ում չի գրանցվել ոչ մի սնանկացած կազմակերդություն, ձեռնարկություն, թեդեն գործում է օրենք սնանկության մասին: Այն ենթադրում է դատարանի մասնակցությամբ իրականացող մի շարք գործընթացներ, որի հետևանքով անվճարունակ դարտատերը սեփականությունը դրամի է վերածվում և բաշխվում դարտատերների միջև:

Անվադողից բենզին

Այժմ էլ բնավ չեն նվազել գայթակղիչ, խիստ ահռելի նորարարական ուսաքարկությունները, որոնք նաև ծախսատար լինելով, դահանջում են մեծ ներդրումներ, փոխարենը խոստանալով հետագայում բարձր շահույթ: Տուլացի ֆիզիկական գիտությունների թեկնածու Ա. Պլատոնովին հաջողվել է լուծել հին անվադողերի վերամշակման խնդիրը, որի վրա տարիներ շարունակ գլուխ էին կոտրում ԱՄՆ-ի, Եվրոդայի, Ճապոնիայի գիտնականներ, գյուտարարներ, ինժեներներ: «Ժիգուլու» մեկ մաշված անվադողից կարելի է «քաշել» 2.5 լիտր բենզին, 1.6 լիտր սդյուտդուղ, 0.8 լիտր մազութ: Նա նախագծել է նաև այդ գործարանը, որի կառուցման ու շահագործման համար հարկ կլինի 1 միլիարդ ռուբլի, որն ըստ նրա հաշվարկների, 2-3 տարի անց յուրաքանչյուր ներդրած ռուբլուց կունենա հարյուրդատիկ շահույթ:

Ռուսաստանը բմրաբիզնեսի միջազգային նոր կենտրոն

Ռուսաստանում տարեցտարի տվող է դայքարը բմրանյութերի առդրանքի շրջանառության դեմ: Եվ ահա թե ինչու: Մինչև վերջերս միջազգային հանցագործ սինդիկատները Ռուսաստանը չէին համարում կարևորագույն ակտիվ ներմուծման ոլորտ: Այժմ իրավիճակը կտրուկ փոխվել է. Ռուսաստանում բմրանյութերի առդրանքի շրջանառությունը կազմում է տարեկան 50-60 միլդ ռուբլի (1992 թ. գներով): 1993 թ. առաջին եռամսյակին «ոչ ռուսական ծագման» բմրանյութերը կազմում էին 35 տոկոս (նա խորդ տարվա 30 տոկոսի դիմաց) եռ հետագա աճի միտում ունեն: Իսկ Մոսկվայում այն արդեն հասել է 90 տոկոսի:

Ֆրանսիացի լրտեսները ես են գնում

Բեռլինում խորհրդային զազմական ներկայության նվազմանը զուգընթաց, ըստ ֆրանսիական «Մոնդ» թերթի հաղորդման, Ֆրանսիան դադարեցրել է իր գրեթե կեսդարյա (երկրորդ համաշխարհային դատերազմի ավարտից հետո) հետախուզական դարաբերանը, որին ներգրավված էին շուրջ 450 լավագույն մասնագետներ, զինված նորագույն էլեկտրոնային ու տեխնիկական միջոցներով, ներառյալ հզոր անտենաներ՝ լսելու և ստդիորդի նդատակով:

Հրաժեշտից առաջ, 1994 թ. ամռանը, Ֆրանսիան դատրաստվում է ներկայացնել իր «ստեղծությունը»: ■

Էքսկլյուզիվ

Պոռնկության օրինականացում Հայաստանո՞ւմ. «թեր» եւ «դեմ»

Հայաստանում տուկայական հարաբերությունները նոդաստում են հանրաքվեության հատարակական կյանքում յուրահատուկ երեւույթների առմատավորմանը, որոնցից է կազմակերդված դոռնկությունը. Սնարին տված հարցազրույցում հայտարարեց «Սոցիոնետ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի տնօրեն ԱՂԱՐՈՆ ԱԴԻԲԵԿՅԱՆԸ: Սոցիոլոգի խոսքերով, այդ երեւույթի աճը նկատվել է դեռ 50-60 ական թթ., երբ երեւանում արձանագրված էր 400 ից ավելի «սիրո քրմուհի»: Այն ժամանակ դոռնկության կազմակերդված ձեւեր ստեղծելու բոլոր փորձերն արագորեն կասեցվում էին, բացի այն դեդքերից, երբ հենց իշխանություններն իրենց համար ստեղծում էին «բանկետային աղջիկների» անձնակազմեր: Այդ դատճառով հաճախորդներին «որսում էին» խնուդիններում, գնացքներում, հյուրանոցների մոտ եւ ռեստորաններում: Այնպես որ, տուկան ոչ թե դոռնկություն է ծնում, այլ ձգտում է այն վերածել բիզնեսի, որը ենթադրում է կազմակերդվածություն եւ իրավական կարգավորում:

«Սոցիոնետ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի անցկացրած հատուկ հետազոտության տվյալների համաձայն, ներկայումս հանրաքվեությունում ավելի քան 800 դոռնիկների մեկ երրորդը մինավորված է 15-32 տարեկան «հեռախոսային աղջիկների» խմբերում: Այդ խմբերի թիվը հասնում է 15-20-ի, ըստ որում որանց մեծ մասը գտնվում է Երեւանում: 6-8 աղջիկներից կազմված խումբը զբաղվորում է «մամա Ռոզան», որն անձամբ ճանաչում է իր հաճախորդներին ու նրանց երաշխավորներին եւ վերահսկում բոլոր դատվերները: Նա հաճախորդների համար երաշխավորում է իր աղջկի «որակը» վնասական հիվանդությունների բացակայությունը: Ծառայությունների դիմաց տիրոջին գանձում է վարձի մոտավորապես կեսը: Այդի 25-30 հազար ռուբլի գնի դայմաններում դա նրան ամսական տալիս է 1-1.5 մլն ռուբլի: Ստացված գումարի մի մասն անցնում է հենց «մամա Ռոզայի» «դաշտդանների» ծեռքը կամ ծախսվում է նրանց հյուրասիրության վրա: Աղջիկները տրամադրվում են ամվճար: Դաշտդանների դերում սովորաբար հանդես են գալիս իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչները, դակաս չտրով՝ հանցախմբերի ներկայացուցիչները:

Այդ հնագույն զբաղմունքին առնչվող օրենքների բացակայության դայմաններում իշխանության եւ հանցաշխարհի հետ դոռնկության սերտաճումը օրինական է: Ինչ-վերաբերում է հենց աղջիկների նկատմամբ, դրանք կազմում են մոտ 300 հազար ռուբլի, քանի որ հոնորարի մեջ կարող են մտնել «հավի չասնված ծառայություններ», դար կամ երգ, բայց հատկապես սրիդդիգ: Ընթրիքի, հյուրանոցի եւ փոխադրամիջոցի վարձի հետ մեկտեղ հաճախորդի վրա հաճույքը նստում է մոտ 75-100 հազար ռուբլի:

Նման ծախսեր իրենց կարող են թույլ տալ միայն սահմանափակ թվով անձինք՝ գործարար մարդիկ կամ կաբառակեր դաշտեռնյաները: Հարցման տվյալների համաձայն, հաճախորդներն ամենից հաճախ 30-40 ամյա ամուսնացած տղամարդիկ են, որոնց թվում 10 ից 2-3 ը սեռական կյանքի մեջ չի մտնում եւ նախընտրում է հաճելի ժամանակ անցկացնել: Սովորաբար այդդես վարվում են օտարերկրացիները եւ ԱՊՀ երկրներից եկած հյուրերը: Հաճախորդների երկրորդ մեծ խումբը կազմում են 22-ից բարձր տարիք ունեցող ամուրիները: Ավելի փոքր եւ 50 ից բարձր տարիքի անձինք փաստորեն այդդիսի սիրով չեն զբաղվում:

Ինչդես ցույց է տալիս հետազոտությունների վերլուծությունը, բնակչության մեջ գերակշռում է սեռական կյանքի կուլտուրայի ցածր մակարդակը: Հարցման կին մասնակիցների կարծիքով, իրենց հաճախորդները դարզունակ են եւ միաժամանակ դաժան: Նույն կարծիքին են ուրիշ դեդքություններից եկած դոռնիկները, որոնք զանգատվում են իրենց հանդեդ հարավցի հաճախորդների կոդիս վերաբերմունքից, որոնք մարդկային հարգանք չեն դրսեւորում վարձու կնոջ նկատմամբ: Զարմանալի չէ, որ հարցման բոլոր մասնակիցները քանիցս ենթարկվել են նվաստացումների, նույնիսկ ծեծի եւ կոդդդուսի: Որոշ դեդքերում նրանք ենթարկվել են կոլեկտիվ բռնաբարության:

«Սոցիոնետը» դիմել է 480 երեւանցիների, խնդրելով արտահայտվել, թե ոնչ՞տ է արդյոք օրինականացնել դոռնկությունը: Հարցման տվյալները ցույց են տվել, որ օրինականացման կողմնակիցները բարձրագույն կրթությամբ երիտասարդ տղամարդիկ են, իսկ հակառակորդները միջնակարգ կրթությամբ հասուն կանայք: Օրինականացումը մերժելու հիմնական դատճառներն են ընտանիքի եւ ամուսնության հիմքերի խարխլումը (25 տոկոս), սեռական կյանքի բավարար կուլտուրայի բացակայությունը (11 տոկոս): Հարցման մասնակիցների 32 տոկոսը գտնում է, որ օրինականացումը թույլ կտա նվազեցնել վնասական հիվանդությունների վտանգը: Կենտրոնի ղեկավար Սիարոն Ադիբեկյանն ասաց, որ Արեւմուտքում, Ռուսաստանում եւ Հայաստանում դոռնկության համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանն այստեղ եւս անհուսալիորեն հետ է մնացել եւ գտնվում է 19-դ դարի մակարդակի վրա: Մենք դատրաստ ենք, ասաց Ադիբեկյանը, ստացված նյութերը գերագույն խորհրդի հանձնաժողովներին հանձնել դոռնկության մասին օրենսդրություն մշակելու համար, ըստ որում խոսք անգամ չդետք է լինի ուժային եւ արգելիչ մեթոդների կիրառման մասին:

«Եթե դոռնկությունը ընդհատակ անցնի, ապա մենք կկորցնենք դրա վերահսկողությունը», հավաստեց սոցիոլոգը:

Սնարի թղթ.

Արեւմտյան Եվրոդայի բոլոր երկրներում ստույգմամբ ծառացել է ներգաղթի խնդիրը

Չէ՞ որ դա նշանակում է նաև նոր բացվող աշխատատեղերի գրաքում, բնակարանի ձեռքբերում, դրանցքան նդատներ: Միայն այս տարվա փետրվարին ԳՖՀ-ն են տեղափոխվել շուրջ 13 հազար ռուսներ (հիմնականում գնչուներ), 6 հազար հարավսլավներ, 4 հազար բուլդարացիներ, 2 հազար բուրներ, 1.5 հազար նախկին ԽՍՀՄ հանրապետություններից եւ բազմաթիվ ալժիրցիներ, վիետնամցիներ, չինացիներ, ալբանացիներ: Եթե տան հաշիվենք նաև զարտուղի ճանապարհով մուտք գործողներին, ապա այդ թվերը դեռ է կրկնապատկվեն, գուցե նաև եռապատկվեն: Ի հետևանք Բունդեսթագը սահմանադրության 16-դ հոդվածում ուղղում է մտցրել, որով խստացվում են ներգաղթողներին ընդունելու կանոնները, բնակության իրավունք տալով միայն քաղաքական դդդատաստանների հետապնդվողներին:

Ոչ մի սնանկ ձեռնարկությո՞ւն

Վերջին տարիներին նկատվում է ֆինանսական եւ իրավաբանական անձանց անվճարունակության աճի միտում: Սակայն որքան էլ տարօրինակ է, առայժմ ԱՊՀ-ում չի գրանցվել ոչ մի սնանկացած կազմակերդություն, ձեռնարկություն, թեդեն գործում է օրենք սնանկության մասին: Այն ենթադրում է դատարանի մասնակցությամբ իրականացող մի շարք գործընթացներ, որի հետևանքով անվճարունակ դարտատերը սեփականությունը դրամի է վերածվում եւ բաշխվում դարտատերների միջև:

Անվադողից բենզին

Այժմ էլ բնավ չեն նվազել գայթակղիչ, խիստ ահռելի նորարարական ուսաքարկությունները, որոնք նաև ծախսատար լինելով, դահանջում են մեծ ներդրումներ, փոխարենը խոստանալով հետագայում բարձր շահույթ: Տուլացի ֆիզիկական գիտությունների թեկնածու Ա. Պլատոնովին հաջողվել է լուծել հին անվադողերի վերամշակման խնդիրը, որի վրա տարիներ շարունակ գլուխ էին կոտրում ԱՄՆ-ի, Եվրոդայի, Ճապոնիայի գիտնականներ, գյուտարարներ, ինժեներներ: «Ժիգուլու» մեկ մաշված անվադողից կարելի է «քաշել» 2.5 լիտր բենզին, 1.6 լիտր սդյուտդուղ, 0.8 լիտր մազութ: Նա նախագծել է նաև այդ գործարանը, որի կառուցման ու շահագործման համար հարկ կլինի 1 միլիարդ ռուբլի, որն ըստ նրա հաշվարկների, 2-3 տարի անց յուրաքանչյուր ներդրած ռուբլուց կունենա հարյուրդատիկ շահույթ:

Ռուսաստանը բմրաբիզնեսի միջազգային նոր կենտրոն

Ռուսաստանում տարեցտարի տվող է դայքարը բմրանյութերի առդրանքի շրջանառության դեմ: Եվ ահա թե ինչու: Մինչեւ վերջերս միջազգային հանցագործ սինդիկատները Ռուսաստանը չէին համարում կարևորագույն ակտիվ ներմուծման ոլորտ: Այժմ իրավիճակը կտրուկ փոխվել է. Ռուսաստանում բմրանյութերի առդրանքի շրջանառությունը կազմում է տարեկան 50-60 միլդ ռուբլի (1992 թ. գներով): 1993 թ. առաջին եռամսյակին «ոչ ռուսական ծագման» բմրանյութերը կազմում էին 35 տոկոս (նա խորդ տարվա 30 տոկոսի դիմաց) եռ հետագա աճի միտում ունեն: Իսկ Մոսկվայում այն արդեն հասել է 90 տոկոսի:

Ֆրանսիացի լրտեսները ես են գնում

Բեռլինում խորհրդային զազմական ներկայության նվազմանը զուգընթաց, ըստ ֆրանսիական «Մոնդ» թերթի հաղորդման, Ֆրանսիան դադարեցրել է իր գրեթե կեսդարյա (երկրորդ համաշխարհային դատերազմի ավարտից հետո) հետախուզական դարաբերանը, որին ներգրավված էին շուրջ 450 լավագույն մասնագետներ, զինված նորագույն էլեկտրոնային ու տեխնիկական միջոցներով, ներառյալ հզոր անտենաներ՝ լսելու եւ ստդիորդի նդատակով:

Հրաժեշտից առաջ, 1994 թ. ամռանը, Ֆրանսիան դատրաստվում է ներկայացնել իր «ստեղծությունը»: ■

digitised by A.R.A.R.@

Խարդախություն

Ում ձեռքն է ավելի երկար

Կամ ծանոթի հաշվո՞վ, թե «Հայկոռոյի» նախագահի արտինով

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան: Հուլիս: Շոգ: Կեսօր: «Հայկոռոյի» վարչության նախագահ Ռազմիկ Դանիելյանի առանձնասենյակ: «Ազգի» թղթակիցը բարեւում է ու ներկայանալով ասում. «Պրն. Դանիելյան, ձեր վարչության կազմում կա նախագծային բյուրո, դրա հետ կապված մի հարցի շուրջ կուզեինք ձեզ հետ խոսել, եթե զբաղված չեք»: «Հայկոռոյի» նախագահ (բարեւի փոխարեն անբավական ու մեղմ ասած, չարացած հայացք նետելով). «Ես ոչ մի բան էլ չունեմ ասելու: Ինչ ա, դու Սովմինից ես, որ քեզ հետ խոսեմ»: «Ազգի» թղթակիցը փորձում է նորից բացատրել հարցը: Հետեւում է պրն. Դանիելյանի ավելի բուռն ընդվզումը. «Փող են տվե՞լ, թե ծանոթ, բարեկամ են, որ եկել ես»: «Ազգի» թղթակիցն այսպիսի ընդունելությունից հետո ենթադրելով, որ «Հայկոռոյի» նախագահը գուցե հենց իր ծանոթ բարեկամների պատճառով չի ուզում ոչինչ ասել, դուրս է գալիս:

Հարգելի ընթերցողներ, այս տեսարանն այն պատմության եզրափակիչ մասն է, որին ծանոթանալու համար պետք է մի փոքր ետ նայենք. 1967 թ. Երեւանի նախագծային արհեստանոցը վերակազմավորվեց Մոսկվայի «Центрсоюзпроект» ինստիտուտի մասնաճյուղի երեւանում եւ մինչեւ 80-ականների վերջը գործում էր որպես այդպիսին: Իր գործունեությունը ծավալելով հանրապետությունում գործող մյուս ոչ հանրապետական ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների նման, ինստիտուտը փոխանցումներ էր անում Մոսկվա, որոնց հաշվին կառուցումներ կատարում, բնակֆոնդի շինարարություն: Այդ ամբողջ ընթացքում նախագծային ինստիտուտը գործում էր «Հայկոռոյի» շենքում, ուր վարձակալությամբ զբաղեցրել էր որոշակի տարածք, մինչեւ սեփական շենքի կառուցումը: 1982 թ. ինստիտուտի օգուտների եւ փոխանցումների հաշվին Մոսկվայից 465 հազար ռուբլի գումար հատկացվեց ինստիտուտի սեփական շենքի նախագծման, կառուցման եւ մյուս ծախսերի համար: Երկաթխորհուրդը թույլտվություն տալով, կառուցման համար տարածք հատկացրեց: 1986 թ. շենքի կառուցումից հետո (շենքի պատվիրատուն ինստիտուտն էր, կատարող «Հայկոռոշին» [illegible]ը), թեեւ շենքը նախագծային [illegible]ստիտուտի համար էր կառուցվում, ստաղարեզ է գալիս նաեւ դրա մի այլ հավակնորդ: «Հայկոռոյը», որի հարեւանությամբ կառուցվել էր շենքը, հավակնում է դառնալ դրա երկու հարկի տեր: Նախագծային ինստիտուտը, քանի որ շենքը կառուցվել է նրա հաշվին, դիմում է Մոսկվայի իր կենտրոնական ղեկավարությանը, որ եթե երկու հարկը տվի «Հայկոռոյին», ապա նոր շենք տեղափոխվելն անհնարին է դառնում, որովհետեւ աշխատանքային տարածքը կրճատվում է: Մոսկվայի շենքի այդ երկու հարկը տրամադրելուց հրաժարվելուց հետո սկսվում է գործը «լավով» վերջացնելու տարբերակը, եւ կենտրոնի թույլտվությամբ ինստիտուտի նորակառույց շենքի մեկ հարկը վարձով տրվում է «Հայկոռոյին»: Հարեւանները հանգիստ սկսեցին աղրել, մինչեւ...

1987 թ. «Հայկոռոշին» տեսնի կառավարիչ դարձավ Մինիստրների խորհրդի նախագահի նախկին տեղակալներից մեկը, եւ քիչ անց «Հայկոռոյի» վարչությունը որոշեց «1988 թ. հունվարի 1-ից փորձնական կարգով ստեղծել նախագծային-արտադրական-շինարարական միավորում «Հայկոռոշին» տեսնի եւ «Центрсоюзпроект» ինստիտուտի Երեւանի մասնաճյուղի հիման վրա»: Բնականաբար «Հայկոռոյի» նման որոշումն ինչ-որ տեղ գոնե պետք է հաշվի առներ նաեւ ինստիտուտի կոլեկտիվի համաձայնությունը: Սակայն եւ ոչ մի փաստաթուղթ այդպիսի համաձայնության մասին կոլեկտիվի կամ տնօրենի ստորագրությամբ մենք չկարողացանք նախագծային ինստիտուտում (այժմ [illegible]) գտնել, եւ տնօրենը նույնպես [illegible]ան փաստաթուղթ չուներ:

Ինչեւէ, ինստիտուտի աշխատակազմի բիկունքում փաստորեն նախագծային ինստիտուտը մտցվեց նորաստեղծ միավորման մեջ: Սակայն մտցվեց միայն ձեւականորեն, քանի որ դրանից հետո էլ ինստիտուտը շարունակում էր աշխատել նախկին ձեւով:

Քաղաքական եւ տնտեսական փոփոխություններ ծնած որոշակի իրադարձություններ փոփոխություններ մտցրին նաեւ ինստիտուտի աշխատանքում: Կապերի փլուզումից հետո կենտրոնից ֆինանսավորումը եւս դադարեցվեց: Ինստիտուտը մնաց իր հույսին: Ֆինանսական դրության վատացումը բերեց հաստիքների կրճատումների, այդ ընթացքում նախագծային ինստիտուտը վերածվեց «Հայկոռոպատերնի» միավորման մասնագիտացված նախագծային կոնստրուկտորական-տեխնոլոգիական բյուրոյի: Իր աշխատանքը եւ մնացած աշխատողների սոցիալական վիճակը գոնե փոքր-ինչ թեթեւացնելու նպատակով կոլեկտիվի ընդհանուր ժողովում որոշվեց շենքի որոշ տարածք վարձակալության տալ այլ կազմակերպություններին: Սա 1992 թ. մայիսին: Այդ մասին նախագծողների ղեկավարությունը բանավոր համաձայնություն էր ստացել նաեւ «Հայկոռոյի» վարչության այն ժամանակվա նախագահից: Ամեն ինչ հարթ էր ընթանում,մինչեւ նոր նախագահի նշանակվելը: Անցած ամբողջ այս մեկ տարվա ընթացքում որեւէ խոսակցություն չի եղել վարձակալության հետ կապված: Նույնիսկ միավորման ղեկավարությունը ոչ մի ձեւով «չի նկատել» այդ վարձակալությունը: Թեեւ վարձակալության տալիս միավորման տնօրենին չի տեղեկացվել այդ մասին, բայց հաշվի է առնվել, որ այդ միավորումը մտնում է «Հայկոռոյի» կազմի մեջ, իսկ վերջինիս նախագահը տեղյակ էր:

Եւ ահա 1993 թ. մայիսին «Հայկոռոյի» վարչության նախագահ դարձավ ոչ անհայտ Ռազմիկ Դանիելյանը (Երեւի ընթերցողներից ոմանք չեն մոռացել Հայաստանի Հանրապետության առեւտրի առաջին նախարարներից մեկին), որի գալուստից հետո «Հայկոռոյի» վարչությունը հունիսի 15-ին նախագծային բյուրոյի վարձակալական տարի շենքի որոշակի տարածք վարձակալության տալ: Չէ՞ որ անհնարին էր, որ այդ մասին ղեկավարությունը չիմանար: Եւ հետո, եթե խախտում կատարել է բյուրոն, մի՞թե այդ ամբողջ ժամանակ միավորման ղեկավարությունը, որի մեջ մտնում է բյուրոն, չի նկատել այդ խախտումը: Իսկ հիմա այդ խախտման փաստն արձանագրելով, գուցե որոշակի հարաբերություններ կարելի է կարգավորել վարչության նոր նախագահի հետ:

1993 թ. հունիսի 18-ի «Հայկոռոյի» վարչության մեկ այլ որոշմամբ, ի կատարումն ՀՀ կառավարության 1993 թ. մայիսի 17-ի թիվ 079-3332 հանձնարարականի, որոշման 1-ին կետով «Հայկոռոյի» վարչության Խորենացու 7ա մասնաշենքից վարձակալական հիմունքներով երկու տարով ՀՀ Հայոցեսագրքանկին տրամադրել 1000 քմ տարածք»: Որոշման 2.2 կետով «Հայկոռոպատերնիս» միավորմանը հանձնարարվում է մեկամսյա ժամկետում լուծել նախագծային բյուրոյի տեղաբաշխման եւ տեղափոխման հարցը: Այսպես, մի քանի օրվա տարբերությամբ երկու որոշում նախագծային բյուրոյի ճակատագրի վերաբերյալ: Ճակատագիր, որի նկատմամբ սակայն բոլորովին էլ անտարբեր չեն բյուրոյի աշխատակիցները, որոնք վճռական տրամադրված ղեմ են իրենց շենքն ոչիչին հանձնելուն, թեեւ բյուրոյի տնօրենն արդեն սկսել է «Հայկոռոյի» վարչության որոշումների կենսագործումը վարձակալողներին արդեն միաժամանակ արգելելով շենք մտնել: Իսկ բյուրոյի կոլեկտիվը գտնում է, որ շենքը ժամանակին կառուցվել է իր միջոցներով, եւ ինքն է նրա տերը: Հետո, այդտեղից տեղափոխվելու, եղած գույքը, սարքավորումները տանելու համար միջոցներ են պետք: Ի դեպ, թեեւ բյուրոն ձեւականորեն մտնում է միավորման մեջ, բայց առանձին տնտեսություն է, նշված շենքը եւ սարքավորումներն իր հաշվեկշռում են: Ուրիշ տեղից ֆինանսավորում չեն ստանում, նույնիսկ միավորման հաշվին փող են փոխանցում: Չնայած իր բոլոր պայմանագրերը բյուրոն կնքել է անմիջապես «Հայկոռոյի» հետ եւ 1991-92 թթ. կատարած աշխատանքների դիմաց նրանից դեռ չի ստացել շուրջ 720 հազար ռուբլի (թե ինչ էր 720 հազարն այն ժամանակ եւ ինչ է հիմա, բոլորը գիտեն): Մի բան էլ. ինչպես նշեցինք, երբ նախագծային բյուրոն (այն ժամանակ ինստիտուտը) մտցվում էր միավորման մեջ, որոշման մեջ դա ձեւակերպված էր փորձնական կարգով: Որքան էլ զարմանալի է, արդեն ահագին ժամանակ է անցել 1987-ից, բայց փորձը դեռ շարունակվում է, թեեւ այդ ժամանակից շատ բան է փոխվել. ինստիտուտն էլ դարձել է բյուրո: Ո՞վ գիտի, գուցե «Հայկոռոյի» բյուրոն տեղափոխելու մասին որոշումը նո՞ւյնպես մտնում է փորձի մեջ: Բյուրոյի աշխատակիցներին հուզում է նաեւ այն հարցը, թե արդյոք հնարավոր չէ՞ Հայոցեսագրքանկը տեղափոխել այն շենք, որ իրենց է առաջարկվելու: Չէ՞ որ իրենց շենքում երկու տարի բնակվելու համար բանկը վերջվերջո այնտեղ բավականին միջոցներ պետք է ծախսի շենքը բանկային վերափոխելու համար: Երբ այդպես է, ապա թող իրենց տվելիք շենքում այդ ամենը կատարի, իսկ իրենք մնան իրենց այժմյան տեղում:

Այս բոլոր հարցերին, փաստարկներին մենք ծանոթացանք լինելով նախագծային բյուրոյում, զրուցելով նրա աշխատակիցների հետ: Բնականաբար միակողմանի չլինելու համար, անհրաժեշտ էր ղարգել նաեւ «Հայկոռոյի» ղեկավարության դիրքորոշումը եւ մոտեցումները նշված հարցերի մասին: Թե ինչպիսին էր այդ դիրքորոշումը, դուք իմացաք հոդվածի սկզբում: Այդ դիրքորոշումը շատ խոսուն է, բայց մենք հարկ ենք համարում նկատել, որ թեեւ «Հայկոռոյի» նախագահ Ռազմիկ Դանիելյանն անողջամտորեն մտածում է, թե իր հետ խոսելու պետք է գան միայն «Սովմինից» կամ էլ կաշառված ու խնամի-բարեկամ մարդիկ ուղարկվեն, լավ կլինի նախ պարզաբանում տա վերոհիշյալ հարցադրումներին: Մանավանդ որ, քաջ չճշտված տվյալների, «Հայկոռոյի» վարչության անդամներից մեկը համաձայնության կարգով աշխատում է նաեւ Հայոցեսագրքանկում, եւ չի բացառվում նրա որոշումը շահագրգիռ կողմի գոյությունը: Իսկ երբ այնուամենայնիվ «Հայկոռոյի» վարչությանը շենքը վարձով է տալու, լավ կլինի մի սենյակ առանձնացվի քաղաքաշինության կանոններ սերտելու համար:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Գործուղում

Ռազմական գործողություններ

Շրջկենտրոնի շենքերն ու ռուսական ոճով կառուցված կղզիներածածկ տանիքներով տները վաղուց արդեն աղակիներ չունեն: Ռազմական գործողությունների ամենօրյա հաղորդագրություններում հնչող «կան մասնակի ավերածություններ» նախադասությունը նշանակում է, որ մի քանի ընտանիքներ եւս փառք են տալու աստծուն, որ արկն իրենց տան վրա չի ընկել, եւ զբաղվելու ցեղդան ճարելով: Իսկ ռուսական տնակներում վաղուց արդեն արծվաբեկցիներ են աղրում: Ռուսները վաճառում են տներն ու զանգվածաբար հեռանում: Երեւի նրանց դպահելու փորձերն ի սկզբանե ձախողման էին դատապարտված, որովհետեւ հաճախակի հրետակոծություններից ծնված վախն ու վաղվա օրվա նկատմամբ անորոշությունն ի վերջո իրենց գործն անելու էին, եւ եթե հայրենիքի զգացողություն կոչված հանգույցով դատապարտված չես այդ հողի վրա աղրելու, վաղ թե ուշ հոգնելու ես, եւ այդ հոգնությանը դիմադրելն անիմաստ է: Կառավարությունը մոտ երկու ամիս առաջ Արծվաբենից բռնագաղթված յուրաքանչյուր ընտանիքի 250 հազար ռուբլի տրամադրեց, որպես դեպք է այդ գումարով կամ նոր տուն կառուցեին, կամ գնեն: Եւ սա այն դեպքում, երբ դեռեւս անցյալ տարվա գներով Արծվաբենում բողոքվել է 40-50 միլիարդ ռուբլու հարստություն: Բայց կյանքը շարունակվում է, եւ միայն անցյալում կատարված սխալները վերլուծելով այսօր հնարավոր չէ դուրս գալ ծանր վիճակից, որում հայտնվել է շրջանը, եւ որն ընդհանուր առմամբ հանրապետության իրավիճակի ածանցյալն է:

Տնտեսություն

Կարելի է ասել, որ շրջանն արդյունաբերություն չունի ընդհանրապես: Միակ արդյունաբերական խոշոր ձեռնարկությունը «Սելենա» գործարանը, որը ռադիոսարքավորումներ էր արտադրում հիմնականում պաշտպանության բնագավառի համար, ներկայումս չի աշխատում, եւ գործարանի 600 աշխատողներ (հսկայական բիվ նման փոքր շրջանի համար) ներկայումս վարձատրվում են միայն հարկադիր ղարաղուրդի դիմաց: Շրջխորհրդի գործկոմի նախագահ Զարեհ Սարգսյանը խիստ դժգոհ է շրջանի նկատմամբ հանրապետության կառավարության վերաբերմունքից: Նրա խոսքերով, իրեն հաճախ մեծ դժվարություններով է հաջողվում շրջանի խնդիրների լուծմանը նպաստող որոշումներ «դոկել» կառավարությունից, սակայն դրանք կամ մնում են թղթի վրա եւ չեն կատարվում ընդհանրապես, կամ կատարվում են մասնակիորեն եւ մեծ ուշացումով: «Հանրապետության օղերաշիվ կառավարման շտաբը եկել էր շրջան, եւ դա մարդկանց մեջ մեծ ոգեւորություն առաջացրեց: Մարդիկ տեսան, որ իրենք այնքան էլ մոռացված ու լքված չեն, իրենց մասին նույնպես հիշում են իշխանությունները: Բազմաթիվ հանդիպումներ տեղի ունեցան, որոշումներ կայացվեցին, այդ ամենի մասին խոսվեց նաեւ հեռուստատեսությամբ, բայց ամեն ինչ մնաց ձայն բարբառո հանապատի: Ընդհանրապես այդպես է՝ ես գնում եմ Երեւան, ներկայացնում մեր խնդիրները, եւ ոչինչ չի փոխվում, իսկ ահա շրջան է գալիս որեւէ բարձրաստիճան պաշտոնյա, եւ ամեն ինչ համեմատաբար հեշտանում է: Այնպես որ, մնում է պարզապես սպասել նոր այցելուի: Պետական խնդիրներում մարդկային գործոնի դերը 10-15 տոկոսից չպետք է անցնի, անհրաժեշտ են պետական կառույցներ եւ մեխանիզմներ, իսկ մեզ մոտ նույնիսկ պետական մոտեցում պահանջող հարցերում հաջողությունների կարելի է հասնել մեծ մասամբ անձնական կապերի միջոցով»:

Այսօր ամենուրեք մարդկանց հետաքրքրող խնդիրներից առաջինը թերեւս հացն է՝ ոչ թե վերացական ու

Մենք ի՞նչ չափով ենք ազգայնամոլ

Գերմանիայում օտարականների եւ հատկապես թուրքերի դեմ վերջերս ծավալված շարժումը զայրույթով լցրեց թուրք հրապարակագիրներին, որոնք «ազգայնամոլ» կոչեցին գերմանացիներին: Իր հրատարակած «Այդինլիք» թերթում ազատախոհ թուրք գրող Ազիզ Նեսինը, սակայն, ուրիշ բաներ հիշեցրեց իր ազգակիցներին: Հատվածներ՝ նրա խմբագրականից:

Այնտեղ, ուր կա ազգ, անպայման կան նաեւ ազգայնամոլ (հովինիստ) ուժեր: Չկա ժողովուրդ, ազգ, որ ազգայնամոլ չունենա: Ազգայնամոլություն է նաեւ ասելը, թե մեր մեջ ազգայնամոլներ չկան: Ամեն ազգ ունի իր մոլեռանդ ազգայնամոլները: Գերմանիայում եվրոպայի ամենազարգացած ազգայնամոլությունը նացիզմն է, ֆաշիզմի մի նոր տեսակը: Գերմանիայի ազգայնամոլությունը ծնվեց օտար աշխատավորների, մանավանդ թուրք աշխատավորների դեմ որոշակի հակազդեցություն: Թուրք աշխատավորների պատճառով գերմանները անգործ էին մնում:

Մինչեւ 5-10 տարի առաջ գերմանները գոհանում էին պատերի վրա գրելով. «Թուրքեր, դուրս կորեք մեր երկրից»: Այս բնությունը հետո ալիքի սաստկացավ:

Հիմա գիտեմ, որ շատերն ինձ հանդուրժող չեն, եւ օսմանյան շրջանի մեր լայնախոհությունը ոչինչ առաջ բերեն, եթե ասեմ, թե թուրքերն էլ աշխարհի ազգայնամոլ ժողովուրդներից մեկն են: Իրականում, այսպիսի վճիռը վիրավորում է իմ ազգային զգացումները, բայց ի՞նչ անենք, սա ճշմարտություն է: Մեր այս ազգայնական զգացումները մինչեւ իսկ մեր լեզվի մեջ են մուտք գործել հայերի ասացվածքներով: Օրինակ. «Թուրքը գինվոր ժողովուրդ է», կամ «Մի թուրքը հանգոր է ամբողջ աշխարհին»: Կարող ենք տալ նաեւ այլ օրինակներ: Ունեւորության տարի խայտառակությունը, որ մեր պատմական պատմության մեջ ամոթալի արարք է, ուրիշ ի՞նչ է, եթե ոչ թուրք ազգայնամոլություն: Մեր օրենքներն իբրեւ փորձանքական անգամ չեն ընդունում հայ, հույն, հրեա փորձանքությունները, եւ հակառակ դրան, առանց օրինական առարկության, առանց արդարության նրանցից տուրք են հավաքում ունեւորության տուրք անվան տակ: Փորձանքությունների կալվածքները հափշտակվեցին: Ծերերն անգամ օգտագործվեցին ճանապարհաշինության եւ քար վերցնելու գործի մեջ: Այս բոլորն ի՞նչ է, եթե ոչ ազգայնամոլություն:

Ի՞նչ էր նպատակը. նպատակը փորձանքության առեւտուրը, կալվածները, հաստատությունները փոխանցելն էր թուրքերին եւ ստեղծել այն թուրք բուրժուազիան, որի կարոտը զգացվում է Սուլտան Քեմալի շրջանից ի վեր:

1955 թ. սեպտեմբերի 6-7-ը Սամբուլում եւ Իզմիրում դարձյալ հույների, հայերի եւ հրեաների առրանքները թալանվեցին: Որքան էլ գաղտնի պահվի, բնաբարվեցին նրանց կանայք ու աղջիկները, թալանվեց մի քահանա: Այս բոլորը ի՞նչ է, եթե ոչ ամենածայրահեղ ազգայնամոլություն, որ մեզ ամոթ է պատճառում: Մեր այս ֆաշիստական վերաբերմունքը պատճառ դարձավ, որ մեր Սամբուլի ամենագեղեցիկ գույնը կազմող սամբուլցի հույները գաղթեն դեպի Հունաստան, որ օտար երկիր էր իրենց համար:

Եթե ուզում եք, ավելի նոր շրջաններին մոտենանք: Ասենք, որ ունեւորության տուրքի եւ սեպտեմբերի 6-7-ի զոհերը գյավուրներ էին: Ի՞նչ ասենք ուրեմն Գահրամանմարաշի այն դեպքերի մասին, որոնց ընթացքում մահմեդականը ջարդեց մահմեդականին: Պարզապես ալեւոր լինելու համար սուննիները սպանեցին նրանց: Այս ընկերային սպանդը առավել քան ազգայնամոլություն, ֆաշիզմ չէ՞: Եթե կուզեք, ուրիշ օրինակներ էլ տամ, սակայն պունակիս մեջ տեղ չմնաց:

Բավական է, ինչքան հարցաքննեք եւ հարցաքննեք, ասելով, թե օսմանյան շրջանում մեր նախնիները միշտ Դանուբ են հասել, թե տակավին եւ նախորդ դարերի թագավորներն անգամ պետական գործածել չգիտեին, մենք հաստատ պետք է իմանանք, թե կեղտոտ անկյունները երբ լվացվել չգիտեին, մենք բաղնիք ունենք: Փոխանակ այսպիսի ոգեղումներով հարցաքննելու, մենք էլ հիշենք մեր ազգայնամոլությունը եւ սովորենք ամաչել այդ ազգայնամոլությունից, որպեսզի նույն դեպքերը մի անգամ եւս չկրկնվեն: ■

Զրուցարան

Ազգայնամոլ

Շրջկենտրոնի շենքերն ու ռուսական ոճով կառուցված կղզիներածածկ տանիքներով տները վաղուց արդեն աղակիներ չունեն: Ռազմական գործողությունների ամենօրյա հաղորդագրություններում հնչող «կան մասնակի ավերածություններ» նախադասությունը նշանակում է, որ մի քանի ընտանիքներ եւս փառք են տալու աստծուն, որ արկն իրենց տան վրա չի ընկել, եւ զբաղվելու ցեղդան ճարելով: Իսկ ռուսական տնակներում վաղուց արդեն արծվաբենցիներ են աղրում: Ռուսները վաճառում են տներն ու զանգվածաբար հեռանում: Երեւի նրանց դպահելու փորձերն ի սկզբանե ձախողման էին դատապարտված, որովհետեւ հաճախակի հրետակոծություններից ծնված վախն ու վաղվա օրվա նկատմամբ անորոշությունն ի վերջո իրենց գործն անելու էին, եւ եթե հայրենիքի զգացողություն կոչված հանգույցով դատապարտված չես այդ հողի վրա աղրելու, վաղ թե ուշ հոգնելու ես, եւ այդ հոգնությանը դիմադրելն անիմաստ է: Կառավարությունը մոտ երկու ամիս առաջ Արծվաբենից բռնագաղթված յուրաքանչյուր ընտանիքի 250 հազար ռուբլի տրամադրեց, որպեսզի պետք է այդ գումարով կամ նոր տուն կառուցեին, կամ գնեն: Եւ սա այն դեպքում, երբ դեռեւս անցյալ տարվա գներով Արծվաբենում բողոքվել է 40-50 միլիարդ ռուբլու հարստություն: Բայց կյանքը շարունակվում է, եւ միայն անցյալում կատարված սխալները վերլուծելով այսօր հնարավոր չէ դուրս գալ ծանր վիճակից, որում հայտնվել է շրջանը, եւ որն ընդհանուր առմամբ հանրապետության իրավիճակի ածանցյալն է:

Տնտեսություն

Կարելի է ասել, որ շրջանն արդյունաբերություն չունի ընդհանրապես: Միակ արդյունաբերական խոշոր ձեռնարկությունը «Սելենա» գործարանը, որը ռադիոսարքավորումներ էր արտադրում հիմնականում պաշտպանության բնագավառի համար, ներկայումս չի աշխատում, եւ գործարանի 600 աշխատողները (հսկայական բիվ նման փոքր շրջանի համար) ներկայումս վարձատրվում են միայն հարկադիր ղարաղուրդի դիմաց: Շրջխորհրդի գործկոմի նախագահ Զարեհ Սարգսյանը խիստ դժգոհ է շրջանի նկատմամբ հանրապետության կառավարության վերաբերմունքից: Նրա խոսքերով, իրեն հաճախ մեծ դժվարություններով է հաջողվում շրջանի խնդիրների լուծմանը նպաստող որոշումներ «դոկել» կառավարությունից, սակայն դրանք կամ մնում են թղթի վրա եւ չեն կատարվում ընդհանրապես, կամ կատարվում են մասնակիորեն եւ մեծ ուշացումով: «Հանրապետության օղերաշիվ կառավարման շտաբը եկել էր շրջան, եւ դա մարդկանց մեջ մեծ ոգեւորություն առաջացրեց: Մարդիկ տեսան, որ իրենք այնքան էլ մոռացված ու լքված չեն, իրենց մասին նույնպես հիշում են իշխանությունները: Բազմաթիվ հանդիպումներ տեղի ունեցան, որոշումներ կայացվեցին, այդ ամենի մասին խոսվեց նաեւ հեռուստատեսությամբ, բայց ամեն ինչ մնաց ձայն բարբառո հանապատի: Ընդհանրապես այդպես է՝ ես գնում եմ Երեւան, ներկայացնում մեր խնդիրները, եւ ոչինչ չի փոխվում, իսկ ահա շրջան է գալիս որեւէ բարձրաստիճան պաշտոնյա, եւ ամեն ինչ համեմատաբար հեշտանում է: Այնպես որ, մնում է պարզապես սպասել նոր այցելուի: Պետական խնդիրներում մարդկային գործոնի դերը 10-15 տոկոսից չպետք է անցնի, անհրաժեշտ են պետական կառույցներ եւ մեխանիզմներ, իսկ մեզ մոտ նույնիսկ պետական մոտեցում պահանջող հարցերում հաջողությունների կարելի է հասնել մեծ մասամբ անձնական կապերի միջոցով»:

Այսօր ամենուրեք մարդկանց հետաքրքրող խնդիրներից առաջինը թերեւս հացն է՝ ոչ թե վերացական ու

digitised by A.R.A.R.@

ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿ. ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՇՐՋԱՆԻ ԽՃԱՆԿԱՐԸ

Լեռնանցից այն կողմ սահմանամերձ շրջանն է, եւ կա մի կետ, որտեղից եւ Սեւանն է երեւում, եւ սահմանը հսկող հայկական ոստիկանները: Կրասնոսելսկի շրջանն է՝ 22 հազար բնակչությամբ, 18 բնակավայրով, 7 հազար բնակչություն ունեցող կիսավեր շրջկենտրոնով ու բնակում հետ 84 կիլոմետրանոց ընդհանուր սահմանով (մինչեւ Արծվաշենի անկումն այդ սահմանը 138 կիլոմետր էր, իսկ 18 բնակավայրերից մեկն էլ Արծվաշենն է, որովհետեւ նա, ով կհաշվի տարածային կորուստների հետ, հետագայում շատ բաների հետ կարող է հաշվվել): Շրջկենտրոնում այդ օրը տոն էր՝ դպրոցականների ամառային երեկոն մարդկանց ստիպել էր գոնե կարճ ժամանակով մոռանալ, որ գոյություն ունի պատերազմ, օրվա հացը չճարելու տագնապ, հողն անմշակ թողնելու մտահոգություն, կիսավեր տունը նորոգելու անզորություն ու վաղվա օրվա նկատմամբ անորոշությունից ծնված վհատություն ասեմ, թե անտարբերություն... Տոն էր, որովհետեւ կյանքը շարունակվում է, եթե նույնիսկ այն բարձունքը, որտեղ վաղ առավոտյան շրջանավարները պատրաստվում էին դիմավորել լուսաբացը, կարող էր հրետակոծության թիրախ դառնալ, որովհետեւ պատերազմ ասածն իր կնիքն առաջին հերթին մարդկանց դեմքերին է դնում, ու հաղթում է նա, ում համար կյանքը շարունակվում է՝ անկախ ամեն ինչից:

Հարեւանցի հայացքով՝ Սեւանի ավազանի քարտեզը

Ինչպես ասացինք, Կրասնոսելսկի շրջանի 22 հազար բնակչությունը 18 բնակավայրերում է ապրում: Դրանցից 7-ը՝ 7 հազարանոց բնակչությամբ գյուղաքաղաքներ են: Դրանցից 3-ը՝ Չայենդ, Մարտունի, Թրուջար գտնվում են Սեւանի ավազանի ներսում, 4-ը՝ Կրասնոսելսկ, Վահան, Արտանիշ, Շորժա գտնվում են ավազանի արեւելյան ափին, 4-ը՝ Տիգ, Արծվաշեն, Ներքին Գետաշեն, Գեղամասար գտնվում են ավազանի հարավարեւելյան ափին, 4-ը՝ Ծովագյուղ, Ծովինար, Ներքին Գետաշեն, Գեղամասար գտնվում են ավազանի հարավարեւմտյան ափին: Ինչպես տեսնում ենք, ավազանի ամբողջ ափամերձ գոտին գրեթե ամբողջությամբ գրավված է գյուղերով: Ավելի ճիշտ՝ գրավված էր մինչեւ 1991 թվականը: Ինչպես գրեցինք, 1991 թվականին Արծվաշենի անկումից հետո մարդիկ ստիպված էին հայրենի գյուղը դնել թերեւս միայն սեփական գյուղատնտեսության վրա, մանավանդ, որ փորձը ցույց է տալիս, թե հանրապետության կառավարության վրա հույս դնելը ոչ միայն չի արդարացնում իրեն, այլեւ այնքան էլ պատվաբեր չէ գյուղատնտեսական բավականին մեծ հնարավորություններ ունեցող շրջանի համար: Եւ այնուամենայնիվ անցյալ տարի շրջանում կատարվել է ընդամենը 591 հեկտար աշնանացան (լավագույն տարիներին այդ թիվը 3000-3500 էր): Որքան էլ զարմանալի է, սակայն հիմնական պատճառը վառելիքի բացակայությունը չէ. ավելի շատ իանգարել են պատերազմական գործողությունները եւ աղագայի նկատմամբ մարդկանց անվստահությունը: Արծվաշենի անկումից հետո մարդիկ այնքան էլ վստահ չէին, թե իրենց ցանածն իրենք էլ հնձելու են: Այս տարի գարնանացանն անհամեմատ ավելի լավ է կատարվել՝ 4520 հեկտար (նախատեսված 5500-ի փոխարեն): Տարբերության պատճառն այն է, որ մոտ 650 հեկտար գտնվում է ռազմի ջրատիպ սահմանամերձ գոտում եւ հասանելի է նույնիսկ բնակչության ավտոմատների համար: Խանգարել է նաեւ այս տարվա խիստ անբարենպաստ գարունը: Երեւ հաշվի առնենք նաեւ, որ գյուղատնտեսության նախարարությունը շրջանին տրամադրել է անհրաժեշտ վառելիքի միայն 60 տոկոսը (թեեւ շրջգործկոմի գյուղվարչության պետ Արայիկ Առուստամյանը գոհ է՝ ասելով, պարզ կդառնա, որ սա բավականին լավ ցուցանիշ է, եւ վկայում է, որ շրջանի բարձրացած գյուղատնտեսությունը կամաց-կամաց ոտքի է կանգնում: Ինչ վերաբերում է մնացած վառելիքին, առայժմ դա բերել են իրենք՝ գյուղվարչության աշխատողները (հիմնականում Սաղախյոյից, կանխիկ գումարով):

Շրջանի վարելահողերի մոտ 65 տոկոսը սեփականաշնորհված է: Հողերը մշակվում են գյուղմթերքների շահագործման կայանի միջոցով, որի տրամադրության տակ 170 միավոր տեխնիկա կա (այդ թվում՝ 37 վարող տրակտորներ): Իհարկե, դա բավականին բանկ արժե մեկ հեկտարի վարի համար գյուղացին վճարում է 11 հազար ռուբլի, ցանքի համար՝ 2500 ռուբլի (հացահատիկ) կամ 4000 ռուբլի (կարտոֆիլ), սակայն բոլոր դեպքերում աշխատանքներն ընթանում են, կարեւորը դա է: Արայիկ Առուստամյանի խոսքերով, շրջանն այս տարի միանգամայն կբավարարի սեփական պահանջները կարտոֆիլով եւ գարիով, իսկ ցորենով կարող է բավարարվել միայն այն դեպքում, եթե կարողանան հեկտարից գոնե 20 ցենտներ բերք հավաքել:

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, առայժմ իրավիճակն այստեղ փոքր-ինչ ավելի բարդ է: Բանն այն է, որ սեփականաշնորհման ժամանակ հաճախ անասուններն ընկան այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք ամենեւին մտադիր չէին զբաղվել անասնաբուծությամբ եւ շտապեցին «իրացնել» դրանք, եւ արդյունքում անասունների գլխաքանակը պակասեց: Դրան նպաստեց նաեւ անորոշ իրավիճակը, երբ մարդիկ վստահություն չունենալով աղագայի հանդեպ, գերադասում էին շտապիորեն «ազատվել» անասուններից: Ներկայումս իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է, եւ անասունների գլխաքանակը մոտավորապես հավասարվել է 1991 թ. մակարդակին: Հիշեցնենք, որ չի կարողացավ պատասխանել, թե մոտավորապես որքան է ներկայումս շրջանի անասունների թիվը (շատերը անասուններին տեղափոխել են թիկունքային գյուղերը եւ այլն), սակայն մի բան պարզ է՝ տնտեսական դժվարությունները շատ ընտանիքների ստիպում են անասուն պահել: Բոլոր դեպքերում գյուղացիները շրջանին օրական 6 տոննա կաթ են հանձնում (դրանից ստացվում է մոտ 800 կգ պանիր): Գյուղացին կաթը հանձնում է 80-100 ռուբլով, եւ եթե հաշվի առնենք նաեւ հարակից այլ ծախսերը, առայժմ 1 կգ պանրի ինքնարժեքը հասնում է մոտ 1500 ռուբլու (մինչդեռ շրջկենտրոնում կարելի էր հնարավոր կլինի գրաքվեի ենթարկելով պարզել, թե քանի՞ սակ կարող է գնել): Այլ կերպ ասած, վնասով է աշխատում նույնիսկ պանրագործարանը:

Պաշտպանություն

Դեռեւս մեկ տարի առաջ շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպվում էր միայն տեղական ուժերով գյուղերում ստեղծված աշխարհազորային ջոկատների միջոցով: Զենքն էլ զինամթերքը հայրենիքում էին որտեղից պատահի, հիմնականում ժողովրդից հավաքած գումարներով: Հետագայում ստեղծվեց գումարտակ, որը գոյություն ուներ մինչեւ անցյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Ներկայումս պաշտպանության գործն ընդհանուր առմամբ ավելի ամուր հիմքերի վրա է դրված: Հիշեցնենք, Արծվաշենի անկումից հետո շրջանի վիճակը ռազմական առումով բավականին ծանրացավ, որովհետեւ սահմանամերձ մի քանի գյուղեր միանգամից հայտնվեցին անմիջապես թշնամու կրակի տակ (խոսքն ամենից առաջ Վահանն, Վերին եւ Ներքին Գետաշեն գյուղերի մասին է), եւ հակառակորդը հնարավորություն ստացավ մինչ այդ Արծվաշենի դեմ կենտրոնացած ուժերը տեղափոխել անմիջապես սահման՝ ուժեղացնելով ճնշումը սահմանամերձ գյուղերի վրա, սակայն վտխտրենը այսօր շրջանի պաշտպանությունը ոչնչական հիմքերի վրա է դրված: Եւ այնուամենայնիվ այս թնազավառում նույնպես ամեն ինչ չէ, որ հարթ է: Շրջանի ղեկավարությունը փաստորեն պաշտպանության հետ որեւէ կապ չունի, այն ամբողջովին հանրապետության իշխանության գործն է, սակայն պաշտպանության նախարարությունը միշտ չէ, որ կարողանում է ժամանակին եւ բավարար չափով հոգալ զինվորների կարիքները, իսկ պաշտպանությունը շինարարություն չէ, որ կարելի լինի մի քանի օրով կանգնեցնել, ուստի հաճախ շրջանի ղեկավարությունն ինքն է ստիպված լինում զբաղվել պաշտպանության «խոհանոցային» խնդիրներով՝ չունենալով ոչ դրա համար նախատեսված նյութական միջոցներ, ոչ լիազորություններ: Իսկ շրջանի թնակչությունը ինչպես բոլոր մյուս, այնպես էլ պաշտպանության խնդիրներում հակված է անհաջողությունների մեղքը բարդել շրջանի ղեկավարության վրա: «Եթե իմ բյուջեում գոնե մի կոդեկ նախատեսված լիներ պաշտպանության համար, ես կաշխատեի այն դարձնել երկու կոդեկ եւ ծառայեցնել պաշտպանության շահերին, ասում է գործկոմի նախագահը, բայց ստացվում է այնպես, որ ես չունեմ որեւէ լիազորություն, բայց ժողովրդի աչքում ամեն ինչի համար ինքս եմ պատասխանատվություն կրում»: Հիշեցնենք, գործկոմի նախագահի առաջին տեղակալ Հայկ Լազարյանը, որը համակարգում է պաշտպանական հարցերը, այն կարծիքին է, թե ավելի ճիշտ կլինի, եթե պաշտպանության նախարարությունն ամբողջությամբ հոգար ռազմական հարցերը եւ ինքն էլ իրականացներ շրջանի պաշտպանությունը: Մինչդեռ այդ ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան՝ մասնավորապես առայժմ լուծված չէ զինվորականներին հատկացվելիք շենքերի հարցը: Երբեմն զինվորականներն այնպիսի շենքեր են փորձում վերցնել, որոնք դեռ պետք են շրջանի տնտեսությանը եւ այլն:

Շրջանի ղեկավարությանը հաջողվել է հասնել նրան, որ շրջանից զորակոչվածները ծառայեն տեղում: Գարնանային զորակոչը հաջող է անցել, ոչ մեկը չի խուսափել ծառայությունից: Մեծ է նաեւ պայմանագրային հիմունքներով ծառայողների թիվը: Մի խոսքով՝ ստեղծվել է բավականին մարտունակ բանակ, թեեւ կարգուկանոնն առայժմ այնքան էլ բարձր չէ (Հայկ Լազարյանը պատճառաբանում է՝ մեզ երիտասարդներ են պետք, ի՞նչ կարգուկանոն կարելի է պահանջել աղեղն քառասուն անց մարդկանցից):

Այդ օրը մենք գործկոմի շենքի բակում էինք, երբ իմացանք, որ աղրբեջանական ջոկատներից մեկը անակնկալ գրոհով գրավել է Ջիլ գյուղի պահակակետերից մեկը: Մի քանի ժամ անց նոր տեղեկություն ստացանք՝ մերոնք հետ են գրավել բարձունքը: Հայ զինվորներից մեկը զոհվել էր, եւ ամենեւին էլ մտիրարություն չէր, որ թշնամին փախել էր՝ մարտադաշտում թողնելով 9 դիակ (մնացածներին հասցրել էին տանել): Դիակները թաղելիս հետագայում, երբ ադրբեջանական կողմը ցանկանա, կարելի է փոխանակել: Ընդհանրապես, հայ եւ ադրբեջանցի զինվորները հաճախ ոչ միայն ռադիոկապով զրուցում են իրար հետ, այլեւ նույնիսկ հանդիպում (շատերը ճանաչում են իրար), թեեւ շրջանի ղեկավարությունն այնքան էլ կողմ չէ նման ինքնագլուխ քայլերի (թիսկը մեծ է): Բոլոր դեպքերում մի բան պարզ է՝ մեր երազած բանակն առայժմ չունենք, բայց եղած քիչն էլ հույս է ներշնչում, որ հետագայում ամեն ինչ լավ է լինելու: Կարեւորը սկիզբն է, եւ այն դրված է: Հավանի է միայն, որ մինչեւ այդ սկզբին հասնելը եւ հիմա էլ պատերազմող շրջանը (անկախ քաղաքական ձեւակերպումներից) մեծաքիվ կորուստներ է տվել, եւ մտավախություն կա, թե մարդիկ ոչ առանց հիմքի կարող են հանկարծ մտածել, թե իրենք միայնակ են թշնամու դեմ: Գործկոմի շենքում հանդիպեցինք Գայանե Մանուկյան-Մելքոնյան հիմնադրամի նախագահ Երվանդ Մելքոնյանին, որը Կրասնոսելսկ էր եկել զոհվածների ընտանիքներին բաժանելու հիմնադրամի հատկացրած ամսական 10 հազարական ռուբլիները: Տեղեկանալով, որ Վահան գյուղում պատրաստվում են կառուցել զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան, որն Մելքոնյանն այդ նպատակով հատկացրեց եւս 100 հազար ռուբլի: Իհարկե, այս ամենն առաջին հերթին բարոյական աջակցություն է, թեեւ կասկած չկա, որ նրանց ծանր պայմաններում այն նաեւ լուրջ նյութական աջակցություն է զոհվածների ընտանիքների համար: Գոնե փոքր-ինչ հաղթահարվում է լքվածության ու միայնակության զգացումը, իսկ դա շրջանի համար շատ կարեւոր է նույնիսկ այս պայմաններում, երբ իրական հոգսերն ավելի հոդեղեն են, առաջան՝ պակաս վարդագույն:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կրասնոսելսկ-Երեւան

digitised by A.R.A.R.@

ԱՄՆ

Աճում են օտար ներդրումները

Անցյալ տարի ամերիկյան ընկերությունները, որոնցից օտարերկրյա առաջատար ներդրողներ, ճապոնացիներն առաջին անգամ փոխարինեցին բրիտանացիներին: Ինչպես հաղորդել է առեւտրի նախարարությունը, ԱՄՆ-ում 1992 թ. Ճապոնիայի անմիջական կապիտալ ներդրումների ծավալն աճել է 4,1 տոկոսով, հասնելով 96,7 միլիարդ դոլարի, իսկ Մեծ Բրիտանիայի ներդրումների ծավալն իջել է 94,7 միլիարդ դոլարի կամ նվազել 5,6 տոկոսով:

3,3 տոկոսով (մինչեւ 61,3 միլիարդ դոլար) անցյալ տարի ԱՄՆ-ի տարածքում ավելացավ Հոլանդիայի ներդրումների ընդհանուր ծավալը, 4,5 տոկոսով (մինչեւ 39 միլիարդ դոլար) Կանադայի եւ 2,1 տոկոսով (մինչեւ 29,2 միլիարդ դոլար) Գերմանիայի կապիտալ ներդրումների բաժինը: Ասիական մասնավոր հատվածում օտարերկրյա ներկայության աճի շարունակվող միտումն էլ ավելի է ամրապնդել ԱՄՆ-ի, որպես առաջատար դարաշրջանի երկրի, վարկը: ԱՄՆ առեւտրի նախարարության գնահատումների համաձայն, երկրի արտաքին դարձը, 1992 թ. արժեզրկումը հաշվի առնելով, հասել է 521,3 միլիարդ դոլարի: Իսկ եթե դիմենք հաշվարկման ուրիշ եղանակի, առանձին բաժնետոմսերի ներկայիս բորսայական գներով օտարերկրյա վարկատուներին ԱՄՆ-ի դարձը 1992 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ավելացել է 54,3 տոկոսով, հասնելով 611,5 միլիարդ դոլարի: Թեեւ ամերիկացի մասնագետները հիացմունքով չեն գնահատում ներքին ընկերություններում օտարերկրյա կապիտալի ծավալումը, նրանք միաժամանակ դա մեծ ողբերգություն չեն համարում: «Պարտադրանքի մեր վիճակի ընդհանուր խորացումն այնքան էլ լավ լուր չէ, ասում է խորհրդատվական հեղինակավոր «Էկոնոմիկ Էդվայզերս» ֆիրմայի փորձագետ Ալեն Սայնայը: Մյուս կողմից, մեր ընկերություններում կապիտալի հարաբերությունը վկայում է արտասահմանում ամրապնդվող այն վստահության մասին, որ ԱՄՆ տնտեսության վիճակը բարելավվելու է»

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Գլխավորը շահույթն է

ԱՄՆ-ը պետք է օգնություն հասկացնի իր պետություններին, իսկ նրա գլխավոր նպատակները պետք է լինեն ամերիկյան արտադրանքի իրացման ընկերությունների ստեղծումը եւ ժողովրդավարության զարգացումը: Այս հեռեւությունն է արվում միջազգային զարգացման վարչության բարեփոխման վերաբերյալ ԱՄՆ վարչակազմի միջգերատեսչական խմբի զեկուցագրում: Վարչությունը դասախոսություն է օտարերկրյա տնտեսական օգնության բաշխման համար: Այն պետք է իր ջանքերը բեւեռի այն երկրներին, որտեղ օտարերկրյա օգնության կարիքն առավել մեծ է եւ օգնության հասկացումը «խոստանում է առավել մեծ օգուտ»: Այդ երկրներից են մասնավորապես Արեւելյան Եվրոպան եւ նախկին Խորհրդային Միությունը, ասվում է փաստաթղթում: Առայժմ վարչությունը, որի աշխատակազմը բաղկացած է 3,5 հազար աշխատակցից եւ որն ամեն տարի 6,8 մլրդ դոլար է ծախսում, գործում է անարդյունավետ, առանց հստակ նպատակների եւ չի արդարացնում իր վրա հարկատուների ծախսած դրամը: Չնայած տասնամյակներով ցույց տրված օտարերկրյա օգնությանը, Աֆրիկայի մեծ մասը, Լատինական Ամերիկայի, Ասիայի առանձին երկրներ եւ Մերձավոր Արեւելքը տնտեսական էլ ավելի վատ վիճակում են, քան 20 տարի առաջ, ասվում է զեկուցագրի նախաբանում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Լրտեսություն

ԲԵՅՐՈՒԹԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է

Չնայած 15 տարվա քաղաքացիական պատերազմից հետո խաղաղ, [illegible] հաստատված է եւ անվտանգությունը որոշ չափով աղահովված, Բեյրութի վերակառուցումը շատ դանդաղ է առաջ գնում փողի պակասի հետեւանքով: Արդեն մի քանի ամիս է, ինչ այդ վայրերում անդորր է շնորհիվ Սիրիայի հզոր, բայց միաժամանակ աննկատելի ներկայության: Բեյրութում փողոցներն այժմ շատ ավելի անվտանգ ու աղահով են դարձել, քան Եվրոպայի մի շարք երկրներում կամ նույնիսկ Վաշինգտոնում: Այդ իսկ պատճառով էլ տարօրինակ եւ անհնարին է թվում նախագահ Քլինթոնի վերահաստատումը որպես վաղեմություն ունեցող այն օրենքի, որով արգելվում է Լիբանան մյցելել: Սիրիայի բույլտվությամբ լիբանանցիներն այժմ իրենք են հետեւում երկրի կարգուկանոնին: Նախկին անհատական կազմավորումներից եկած զինյալների հաշվին լիբանանյան բանակում ծառայողների քանակն այժմ կրկնապատկվել է, հասնելով 65 հազարի: Մոտ 17 հազար էլ ծառայում են ոստիկանությունում եւ անվտանգության այլ ուժերի շարքերում:

Բեյրութն այլեւս չունի հետպատերազմյան «զզզված» տեսք, բայց դեռ նաեւ հեռու է նախապատերազմյան իր բարվոք վիճակից: Ավերածությունների կույտերը մեծ մասամբ մաքրվել են, գաղթականները տեղավորվել: Քաղաքի կենտրոնական մասը վերակառուցվում է, բայց ծայրամասային հսկա տարածությունները դեռեւս մնում են նախկին մոայլ ու անմխիթար վիճակում: Փողոցային լուսավորությունը վերականգնվել է, չնայած ոչ շատ կայուն ձեւով: Անջատումները մեծ մասամբ անսարքության հետեւանք են: Հեռախոսային եւ հեռադասակցային ծառայությունները շատ ավելի վատ վիճակում են, բայց հեռանկարները մեծ են: Ամսական 100 հազար գիծ է վերանորոգվում եւ նախատեսվում է, որ 6 ամսից Լիբանանը անթերի կապերի մեջ կլինի աշխարհի ցանկացած երկրի հետ:

Բացի կապի եւ հաղորդակցության բացակայությունից, մի շարք այլ պատճառներով, ներդրողների բիվը երկրում պակասել է: Դրանցից մեկը կաբառակերությունն է: Չնայած Լիբանանը պետք է «բախտավոր» զգա իրեն Ռաֆիկ Հարիրիի նման վարչապետ ունենալու համար, որն այնքան հարուստ է, որ անագնիվ ճանապարհով հարստանալու ոչ մի ցանկություն չի կարող գայթակղել նրան: Ընդհակառակը, նա նույնիսկ ուրիշների գայթակղության առաջն է առնում որոշ չափով եւ լիբանանցիները հավատացած են, որ կառավարությունն այժմ ավելի ազնիվ է, քան երբեւէ:

Հարուստ լիբանանցիներն իրենց ունեցվածքը ներդնում են կալվածքների մեջ: Մեծ թափ է ստացել շենքերի շինարարությունը: Անցյալ տարի 600-700 միլիոն դոլար էր հատկացվել այդ բնագավառին: Նույնիսկ նախքան շինարարության ավարտվելը բնակարանները վաճառվում են 1-1,5 միլիոն դոլարով:

Քաղաքի կենտրոնական մասի համար նախատեսված է նոր նախագիծ, որն արժելու է 3,3 միլիարդ դոլար, որից 1,1 միլիարդը ծախսվելու է փոխհատուցելու այդ երկրի սեփականատերերին: Դումարը տրամադրելու են վարչապետը եւ մի շարք այլ միլիարդատերեր: Արտասահմանյան օգնությունը փիչ է: Միջազգային շինարարական ընկերությունները աղատում են տեսնելու, թե արդյոք նյութական դարձարներ առկա՞ են երկրում: Նրանք շահագրգռված են հիմնականում մեծ, հեռանկարային հնարավորություններ ունեցող կառույցների, օրինակ, Բեյրութի օդանավակայանի վերակառուցմամբ:

Պրն. Հարիրին իմը փորձում է վերականգնել Ծոցի ֆոնդը եւ կառուցել էր 1989 թ. խաղաղության համաձայնագրից հետո կուտակել մինչեւ մի քանի միլիարդ դոլար:

Ասում են, Ծոցի երկրներ կատարած իր վերջին շրջագայության օրերին նա 500-600 միլիոն դոլար է «հավաքել» եւ փակելու համար չար լեզուներ, որոնք կրկնում են, թե Լիբանանում միանձնյա իշխանություն է, նա ստեղծել է վեց նոր նախարարություն, որոնցից մեկն զբաղվում է բնաջնջողության հարցերով:

Իհարկե, քաղաքական անկայունությունն էր հիմնական պատճառը, որ մարդիկ ներդրումներ չէին կատարում երկրում: Այժմ այդ անկայունությունը նվազագույնի է հասցված: Միակ քաղաքական սպառնալիքը կարող է գալ մարոնիթ քրիստոնյաների կողմից, որոնք դեռեւս պաշտպանում են գորավար Միշել Աունին, որն այժմ տարագրման մեջ է Ֆրանսիայում: Նրանք անցյալ տարի բոյկոտի ենթարկեցին խորհրդարանային ընտրությունները, որովհետեւ այն անցկացվում էր Սիրիայի բացարձակ «գերիշխանության» պայմաններում, մինչդեռ նրանք (եւ ոչ միայն նրանք) ցանկանում են վերականգնված տեսնել երկրի անկախությունը եւ պատրաստ են հաշտության եզրեր գտնել հանուն Լիբանանի ներկա փոքրացած հանրապետության:

The Economist, հունիս 25, 1993

Միջուկային զենք

Ուկրաինայի խաղագումարը դիվանագիտական խաղերում

Ինչպես գրում է անգլիական «Ֆայնենշլ թայմզ», Ուկրաինայի խորհրդարանը եւս մեկ քայլ կատարեց երկիրը միջուկային տերություն դարձնելու ուղղությամբ, հայտարարելով, թե Ուկրաինային են պատկանում իր տարածքում տեղաբաշխված 176 ռազմավարական միջուկային հրթիռները: Թեեւ այդ բոլոր հրթիռները Մոսկվայի վերահսկողության տակ են, որոշ չհատատված հաղորդումների համաձայն, Ուկրաինան փորձեր է անում ստեղծելու վերահսկողության սեփական համակարգ:

«Դեյլի թելեգրաֆը» գտնում է, որ այդ միջոցառումը մեծ անհանգստություն կոյաճառի Ռուսաստանին, որին մտահոգում է Ուկրաինայում գտնվող զինանոցի անվտանգությունը, ինչպես նաեւ այն բանի հնարավորությունը, որ այդ զենքը կարող է օգտագործվել իր դեմ: Կիեւի վճիռը հավասար չափով տագնաղեցրել է արեւմտյան տերություններին, որոնք դիվանագիտական բոլոր մաչելի միջոցներն օգտագործում էին Ուկրաինայի լիակատար եւ արագ զինաթափումն աղահովելու համար:

Այն փաստը, որ Ուկրաինան իրեն հայտարարում է միջուկային տերություն, վկայում է նախկին Խորհրդային Միության հանրաղեստությունություններում անկայունության մեծացման մասին, նշում է գերմանական «Բրաունշվեյգեր ցայտունգը»:

«Ուկրաինայի խորհրդարանը մեծացրեց խաղագումարները դիվանագիտական այն դրոշակում, որտեղ խաղարկվում է նախկին ԽՍՀՄ միջուկային զինանոցը, գրում է «Վաշինգտոն փոստը»: Կիեւը կասկածներ ունի այն համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցում, որին համաղասասխան ինքը ստիպված կլիներ հրաժարվել ներկայումս հանրաղեստության սղաղազինության մեջ գտնվող 1600-1800 մարտագլխիկներից: Վեղուծաբանների կարծիքով, Ուկրաինայի խորհրդարանի քայլը զգալի չափով խորհրդանշական բնույթ ունի, քանի որ հրթիռների արձակման համար անհրաժեշտ միջուկային ծածկագրերը դարձյալ Մոսկվայի վերահսկողության տակ են: Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ այդ քայլը կտագնաղեցնի Միացյալ Նահանգներին եւ Ռուսաստանին, որոնք ձգտում են կանխել նախկին ԽՍՀՄ տարածքում միջուկային երկրորդ տերության հայտնվելը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1987-ին մեր ընկերությունը նոպատակ դրեց ստեղծել հաշվապահության աշխատանքների ավտոմատացման մի փաթեթ, որը բավարարեր երկու հիմնական պահանջի.

● Պետք է հեշտությամբ օգտագործվեր կոմպյուտերների հետ աշխատանքի փորձ չունեցող հաշվապահների կողմից:

● Պետք է կատարեր բոլոր հիմնական հաշվապահական գործողությունները: Փաթեթի առաջին տարբերակը աշխատում է բազմաթիվ հիմնարկներում եւ բարձր է գնահատվել հաշվապահների ու տնօրենների կողմից: Հաշվի առնելով նրանց առաջարկները մշակել ենք երկրորդ կատարելագործված տարբերակը:

Հրավիրում ենք բոլոր տնօրեններին եւ հաշվապահներին ծանոթանալ փաթեթի հնարավորություններին:

Հեռ. 252463, 254758, 584545

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

«Արամ Խաչատրյան–90» փառատոն

9 հուլիսի
Հայաստանի Ֆիլհարմոնիկ
Նվագախումբ

Համերգը կսկսվի Երեւանի Երկանչյանի «Հանդիսավոր կոլոնակներով» նվիրված Արամ Խաչատրյանի 90-ամյա հոբելյանին: Համերգը կանցնի «Արամ Խաչատրյանը եւ նրա հետնորդները» նշանաբանով:

Կհնչեն Արամ Խաչատրյանի «Ողջույնի նախերգանքը», Այնմանոր Հարությունյանի «Կրակի բոլորով» սիմֆոնիկ հատվածը, Ղազարոս Սարյանի «Հայաստան» պանոյից երկու մաս, Լոնո Բաբաջանյանի «Հիրոսական բալլադը» (մենակատար՝ Կարինե Օհանյան):

Երկրորդ բաժնում կկատարվեն հատվածներ Էդգար Հովհաննիսյանի «Մարմար» բալետից, Լորիս Ճգնավորյանի Ջուրակի կոնցերտ (մենակատար՝ Դավիթ Մովսիսյան), Էդվարդ Միրզոյանի «Տոնական նախերգանքը»:

Դիրիժոր ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
Մենակատարներ ԿԱՐԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ,
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Սկիզբը՝ ժ 17:30-ին:
Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ժամը 11:00-18:00:

Լուրերից Հետո

Եվրախորհրդի լրացուցիչ պայմանները Ռուսաստանին

Օրերս Եվրոպայի խորհրդի խորհրդարանային համաժողովի նստաշրջանից վերադարձած Ռուսաստանի խորհրդարանի պատվիրակությունը միջազգային այդ կազմակերպությանը մեղադրեց Ռուսաստանի անդամակցության հարցում «երկակի չափանիշների» կիրառման մեջ: Հուլիսի 6-ին Մոսկվայում անցկացվեց պատվիրակության անդամների մամուլի ասուլիս: Պատվիրակության ղեկավարը՝ խորհրդարանի միջազգային գործերի եւ արտաքին տնտեսական կապերի կոմիտեի նախագահ Եվգենի Համբարձումովը հայտնեց, որ Ռուսաստանի համար առաջադրվել են ընդունման լրացուցիչ պայմաններ, ինչպիսիք են Ռուսաստանում խորհրդարանային նոր ընտրությունների անցկացման անհրաժեշտությունը եւ նոր սահմանադրության ընդունումը: Համբարձումովը հիշեցրեց, որ Ռուսաստանի խորհրդարանն ընտրվել է ժողովրդավարական «մրցակցային հիմքի» վրա եւ Ռուսաստանում արդեն իրականացվել է «սահմանադրական խոր բարեփոխում», ըստ որում հիմնական օրենքում մարդու իրավունքներին առնչվող նոր գլուխը ներառել է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի եւ Մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների եվրոպական միջազգագրի հիմնարար դրույթները: Եվգենի Համբարձումովի կարծիքով, Ռուսաստանին Եվրախորհրդի անդամ ընդունելիս լրացուցիչ պայմանների առաջադրման պատճառը երկրի ներսում քաղաքական պայքարն է: Այդուհանդերձ, խորհրդարանային կոմիտեի ղեկավարը անթույլատրելի է համարում Ռուսաստանին «Եվրոպայի նախասենյակում չափազանց երկար սպասեցնելը»:

ԻՏԱ

Ուրալի Հանրապետության հռչակումը հակասահմանադրական

Հուլիսի սկզբին Ուրալի Հանրապետության հռչակման մասին Սվերդլովսկի մարզխորհրդի նստաշրջանում ընդունված հայտարարությունը կարող է դիտվել բացառապես որպես այդ հարցի աթիվ ժողովրդագրամավորների կարծիքն արտահայտող փաստաթուղթ, բայց բնավ ոչ որպես կատարված իրավաբանական փաստ, ինչ-ինչ իրավական հետեւանքներով: Այդ մասին ասվում է երեքշաբթի օրը Մոսկվայում տարածված Ռուսաստանի արդարադատության նախարարության հայտարարության մեջ: Փաստաթղթում նշվում է, որ դաշնակցային պայմանագիրը դաշնակցային կառուցվածքը հանձնում է պետական իշխանության դաշնակցային մարմինների տնօրինմանը, երկրամասերի եւ մարզերի համադասասխան մարմիններին իրավունք չտալով այդ հարցի աթիվ ընդունելու նորմատիվ ակտեր: Սահմանադրության համաձայն մարզի եւ երկրամասի կարգավիճակը կարող է փոփոխվել միայն դրանցում աղրող ընտրողների մեծամասնության կամքի ազատ արտահայտման հիման վրա, Ռուսաստանի ժողովրդագրամավորների համագումարի հաստատումից հետո:

ԻՏԱ

Հաիթցիները գոհ են, բայց կասկածոս

Կասկածոս վերադահությամբ ընդունեցին հաիթիցիները ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնում կնքված ծրագիրը, ըստ որի հոկտեմբերի 30-ին արտաքսված նախագահ Արիստիդեն վերադառնալու է երկիր, իսկ բանակի հրամանատար Սեդրասը իր տեղը զիջելու է նրան որպես պետության գլխավորի: Հաիթցիների վերադահությունը բխում է այն փաստից, որ երկու ղեկավարները բանակցությունների ամբողջ ընթացքում երես առ երես չհանդիպեցին իրար: Այսուհանդերձ, 10 կետ պարունակող ծրագիրը նախատեսում է նաեւ, որ երկրի խորհրդարանը հաստատի նախագահ Արիստիդեի նշանակած որեւէ վարչապետի, որից հետո միայն ՄԱԿ-ը կվերցնի այդ երկրի նկատմամբ հաստատված էմբարգոն:

digitised by A.R.A.R.@

Տնտեսական դաշինքը կամրապնդի ԱՊՀ-ն

Մոս օրերս Ռուսաստանի եւ Բելառուսի վարչապետները հանդես եկան հայտարարությամբ, որ կստորագրեն երկու պետությունների հետագա միասնացման ուղիների վերաբերյալ: Այդ մասին երեքշաբթի օրը Մինսկում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց Բելառուսի վարչապետ Վյաչեսլավ Կեբիչը: Նա նշեց, որ փաստաթղթի ստորագրումը «առաջին քայլն է Բելառուսի եւ Ռուսաստանի տնտեսական դաշինքի ստեղծման ճանապարհին»: Ըստ որում, Վ. Կեբիչի խոսքերով, «դա չի կարելի գնահատել որպես ԱՊՀ-ն քանդելու փորձ»: Ընդհակառակը, նա համոզված է, որ երկկողմ տնտեսական դաշինքի ստեղծումը կամրապնդի հանրակցությունը: Այն հարցին, թե տնտեսական դաշինքի ստեղծումից հետո Բելառուսը կմնա՞ արդյոք ռուբլու գոտում, վարչապետը պատասխանեց. «Մենք այնտեղ կմնանք, քանի դեռ թույլ են տալիս հանգամանքները»: Վ. Կեբիչը ընդգծեց, որ տվյալ տնտեսական դաշինքի գաղափարը ենթադրում է ռուսական ռուբլու շրջանառություն: ԻՖ

Եգիպտոսը պահանջում է վերադարձնել Օմարին

Եգիպտոսի արդարադատության նախարարությունը ԱՄՆ-ից պահանջեց իրեն վերադարձնել Օմար Աբդել Ռահմանին՝ մահափորձ կազմակերպելու ամբաստանությամբ: Իսլամ կրոնականը, որի հետեւորդներն են, ըստ ամերիկյան իշխանությունների, կապված են Նյու-Յորքի առեւտրական կենտրոնի շենքը ռմբահարելու գործին, կալանքի տակ է գտնվում Նյու Ջերզիում, ներգաղթի օրենքները խախտելու մեղադրանքով: Հայր կրոնապետի պաշտպան փաստաբանները բողոքեցին Եգիպտոսի առաջարկի դեմ, զգուշացնելով ամերիկյան արդարադատությանը, թե Օմարը Եգիպտոս վերադարձնելու դեպքում ֆիզիկական հաշվեհարդարի կենթարկվի, որի պատասխանատվությունը կկրի ամերիկյան կողմը:

Ամերիկացիները մտան Մակեդոնիա

Երեկ ամերիկյան խաղաղապահ զորքի 20 հոգանոց խումբը հասավ Մակեդոնիա (Հարավային Հարավսլավիա): Այսօր եւ առաջիկա օրերին առաջապահի այդ խմբին կմիանան եւս 260 զինվոր, որոնք ծառայելու են ՄԱԿ-ի տեղում գտնվող խաղաղապահ ուժերի շարքերում, «արգելելու համար բռնիական կոիվների տարածումն այդ շրջանում»:

Արտաքին առեւտրի դրական արդյունքները

Դատելով հրապարակված վիճակագրական տվյալներից, ա.թ. առաջին եռամսյակում Ֆրանսիայի արտաքին առեւտուրը հասել է դրական արդյունքների: Փարիզի «Մոնդ» թերթն հաղորդում, մասնավորապես նշելով «պատմական ռեկորդ, երբ երկրի արտաքին առեւտրի դրական հաշվեկշիռը գերազանցեց 7 մլրդ ֆրանկից: Առաջին եռամսյակում արտաքին առեւտրական շրջանառության դրական հաշվեկշռումը կազմեց 16,2 մլրդ ֆրանկ, եռակի գերազանցելով անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի արդյունքը (5,3 մլրդ ֆրանկ): Սակայն առավել ուշադիր քննության դեպքում ի հայտ են գալիս լուրջ բացեր: Դրական հաշվեկշռումի աճի նկատվում է տնտեսական լճացման եւ սպառման զգալի կրճատման պայմաններում, որը հանգեցրել է ներմուծման կտրուկ նվազմանը: Մարտին անցյալ տարվա 105 մլրդ-ի դիմաց ներմուծումը կազմեց 84,4 մլրդ ֆրանկ: Ներմուծումն ապահովաբար կրճատվում էր նախորդ բոլոր ամիսներին, ինչը գործարար ակտիվության թուլացման ակնհայտ ցուցանիշ է: Այդ ժամանակամիջոցում արտահանությունը նույնպես կրճատվեց, բայց պակաս նշանակալի չափերով, եւ հենց այդ տարբերությամբ է բացատրվում ներկայիս «ռեկորդային» արդյունքը: Առաջին հայացքից վայելուն առեւտրային հաջողությունն իրականում ներկայացնում է սոսկ մեղալի հակառակ երեսը. տնտեսական իրավիճակի ընդհանուր վատացմամբ պայմանավորված արտաքին առեւտրի ծավալների կրճատում:

ԲԻԶՆԵՍ ՏԱՍՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊՈՐՏՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՇՓՈԹՎԱԾ

ՈՒԵՖԱ-ի տարօրինակ որոշումն անակնկալի է բերել ոչ միայն ՀՍԸՄ-ի եւ «Արարատի» ղեկավարներին ու խաղացողներին, որոնք անստանալիորեն զրկվեցին եվրոպական մրցաշարերից, այլեւ նրանց երկրպագուներին, ՀՀ սպորտվարչությանը եւ ֆուտբոլի ֆեդերացիային:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Էմին Բաղյանը տեղեկացրեց, որ վերջապես ֆաքս է ստացվել ՈՒԵՖԱ-ից, եւ պարզվել են մեր թիմերի զրկման պատճառները: ՈՒԵՖԱ-ի գլխավոր քարտուղար Գերհարդ Այգները գրում է. «Ցավով եմ տեղեկացնում, որ հուլիսի 1-ին ժնեւում տեղի ունեցած իր արտահերթ նիստում արտաքոց դեպքերի ուսումնասիրման ՈՒԵՖԱ-ի կոմիտեն որոշել է ձեր հանրապետության թիմերին չթույլատրել մասնակցելու 1993-1994 թթ. Եվրոպայի ակումբային մրցաշարերին հիմք ընդունելով այն, որ ձեր երկրի հետ գրեթե չկան կապի միջոցներ եւ քաղաքական իրավիճակն անկայուն է, երբ հարցը վերաբերում է անվտանգության ապահովությանը: Տվյալ իրավիճակն անընդունելի է միջազգային մրցումներ անցկացնելու համար: ՈՒԵՖԱ-ն այնուամենայնիվ հույս ունի, որ դրությունը կլավանա Հայաստանում, մեր ներկայացուցիչը կմասնակցի տեղում ուսումնասիրելու վիճակը եւ ձեր ազգային թիմերը իրավունք կունենա հաջորդ հնարավորությունների դեպքում մասնակցել եվրոպական մրցաշարերին»:

Իրենց հերթին մեր հանրապետության տարբեր ասյաններ ՈՒԵՖԱ-ին հասցեագրված բողոք նամակներ են պատրաստել:

ՈՒԵՖԱ-ի նախագահ Լ. Յոհանսոնին հղած իր նամակում ՀՀ սպորտվարչության նախագահ Ռ. Թորոսյանը մասնավորապես նշում է. «1993-94 թթ. եվրոգավաթներից մեր թիմերին զրկելու պատճառաբանությունները ավելի քան տարօրինակ են: Ներկայումս Հայաստանում շատ ավելի կայուն է քաղաքական իրավիճակը, քան նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող որեւէ հանրապետությունում:

Հայաստանը չի եղել եւ չի գտնվում ռազմական հակադրության մեջ որեւէ երկրի հետ: Ավելին, մեր հանրապետության ամենատարբեր մարզաձեւերի առաջատար մարզիկները հաջող մասնակցություն են ցույց տալիս միջազգային պատասխանատու մրցումներում: Մենք հարգանքով ենք վերաբերվում ՈՒԵՖԱ-ի կանոնակարգի բոլոր պահանջներին, նույն թվում ֆուտբոլիստների եւ հանդիսականների անվտանգության ապահովման հարցին: Հայաստանի թիմերի վերաբերյալ ՈՒԵՖԱ-ի ընդունած որոշումը, որքան էլ ցավալի է, անտեղյակության ծնունդ է, ուստի եւ անհիմն: Խնդրում եմ հնարավորության սահմաններում վերանայել անարդարացի որոշումը»:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Նիկոլայ Ղազարյանը նույն Յոհանսոնին ուղղված իր նամակում, նույնպես հույս է հայտնում, թե ՈՒԵՖԱ-ն կվերանայի իր որոշումը: «Հայաստանի թիմերին զրկելու ՈՒԵՖԱ-ի որոշումը բարոյական ծանր հարված է մեր ազգային ֆուտբոլին, որը պատրաստվում է առաջին ինքնուրույն քայլերն անել միջազգային ասպարեզում, գրում է նախկին ֆուտբոլիստը: ՈՒԵՖԱ-ն իր որոշումը պատճառաբանել է, իբր Հայաստանում անկայուն վիճակ է: Մինչդեռ Մոսկվայում կայացած մեր հանդիպման ժամանակ եկել էինք նախնական պայմանավորվածության, որ ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչները մայիսին կժամանեն Հայաստան եւ տեղում կծանոթանան իրավիճակին: Տավոտ, այդպես չեղավ: Լինելով տեղում, նրանք կհամոզվեին, որ Հայաստանում ոչ ռազմական, եւ ոչ էլ քաղաքական անհանգստացնող վիճակ գոյություն չունի», վստահեցնում է Ն. Ղազարյանը:

Կվերանայի՞ ՈՒԵՖԱ-ն իր որոշումը, մեր կարծիքով դժվար: Սնում է տպավորություն... ըստ ՈՒԵՖԱ-ի կանոնակարգի: Ո՞րն է այդ: Գուցե տեղեկա՞նք է պետք, որ մենք պատերազմի մեջ չենք, սակայն ունի՞ք... Գուցե ՈՒԵՖԱ-ն նո՞ւյնպես դիտողներ ուղարկի...

Հույժ գաղտնի

❖ Մեծագույն դժվարություններով մեր անանուն լրատուն պարզել է, որ Գերագույն խորհուրդը ձեռնամուխ է եղել կվոտի սեփական թիմ ձեւավորելուն: Հիմնավորումն այն է, որ բոլոր մյուս թիմերը անվերջ փորձ են անում կապկելու պատգամավորներին, մասնավորապես անվերջ կրկնում են. «գրանցում», «քվորում չկա», «անջատել խոսափողը» եւ այլն: Դե, եթե դա է ամբողջը, սրա մի՞թե երեք տարվա հարուստ փորձի տեր պատգամավորները բոլորից լավ չեն ներկայացնի սեփական աշխատանքը: Այնպես որ բժշկական ինստիտուտի հայտնի թիմին լուրջ մրցակից է սպասում:

❖ ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության նախարարությունը ազգանոպաս մի որոշում է կայացրել. մինչեւ նոր ուսումնական տարվա սկիզբը Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքներում, ավաններում եւ երջկենտրոններում բացել պետական համալսարաններ, իսկ բոլոր գյուղերում անխտիր՝ ֆոլեջներ: ՀՀ կառավարությունը տեղյակ է պահել տեղական իշխանություններին, որ վերջիններս իրենց հնարավոր առարկությունները պետք է ներկայացնեն հիշյալ նախարարության ղեկավարությանը մինչեւ օգոստոսի 1-ը: Դրանից ուշ ներկայացված առարկությունները քննության չեն առնվի, եւ նախարարության որոշումը կատարվելու է անշեղորեն:

ՎԱՍԵՐԻ ՍԻՐՈՅԱՆ
«Նուազուր» գործակալության անանուն աղբյուր

ԱԶԳ-ՄԱՐԶԱԿԱՆ

Երկու ոսկե եւ մեկ արծաթե մեդալ աշխարհի առաջնությունում

Հունա-հռոմեական ըմբշամարտի 15-16 տարեկան պատանիների աշխարհի առաջնությունում, որը տեղի ունեցավ Պրեսլավ քաղաքում, փայլուն հանդես եկան մեր հանրապետության ներկայացուցիչները: 6 մասնակիցներից երկուսը արժանացան ոսկե, մեկը՝ հոնգ մեդալի:

Աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեցին երեւանի «Օլիմպիական հերթափոխ» ուսումնարանի սան, դինամոական Կարեն Մնացականյանը (58 կգ, մարզիչ Հարեգին Թոչարյան) եւ Պետրոյանի «Սեւան» մարզական ընկերության ներկայացուցիչ Լեւոն Գեղամյանը (74 կգ, մարզիչ՝ Սմբատ Նազարյան):

Բրոնզե պարգեւի արժանացավ Գարեգին Թոչարյանի մյուս սանը՝ Գարիկ Բաղդասարյանը (54 կգ):

Բոլոր 3 ըմբիշներն էլ այս տարի դարձել են Հայաստանի չեմպիոններ եւ իրենց հեռանկարային մարզիկներ են:

Լեւոն Գեղամյանը հենց Գերմանիայից մեկնում է Ավստրիայի Գեսսիա-քաղաք, որտեղ հուլիսի 11-ից 13-ը անցկացվելու է 17-18 տարեկան հունա-հռոմեական ըմբիշների Եվրոպայի առաջնությունը: Այդ մրցումներին կմասնակցեն նաեւ Տիգրան Սկրտչյանը (50 կգ, Մխոյան), Ռաֆիկ Սիմոնյանը (58 կգ, Էջմիածին) եւ Ալիկ Կիրակոսյանը (81 կգ, Երեւան):

Հավանական մարզիչներն այդ մրցումներում կլինեն Միխայել Եղոյանը (Երեւան) եւ Գեւորգ Հովհաննիսյանը (Գյումրի): Եւս մի քանի օր եւ հուլիսի 23-ից 25-ը Սթենֆոում նույն մարզաձեւից կանցկացվի աշխարհի երիտասարդական առաջնությունը: Նախատեսվում է, որ Հայաստանը կներկայանա 6 ըմբիշներով, որոնց թվում հավանաբար լինեն 1992 թ. Եվրոպայի առաջնության 2-րդ մրցանակակիր Վարդան Պալյանը (48 կգ, Գյումրի), անցյալ տարվա Եվրոպայի 3-րդ մրցանակակիր Արմեն Նազարյանը (52 կգ, Երեւան) եւ աշխարհի պատանիների կրկնակի չեմպիոն Մխիթար Մանուկյանը (62 կգ Գյումրի), որն այս տարի մեծահասակների Եվրոպայի առաջնությունում գրավեց 5-րդ տեղը:

Սեւ ամպեր Բեռնար Տապիի գլխավերեւում

Բեռնար Տապիին եւ իր աջ թեւը՝ ժան Պիեռ Բեռնեն

Այս տարի հինգերորդ անգամ անընդմեջ Ֆրանսիայի չեմպիոն եւ առաջին անգամ Եվրոպայի չեմպիոնների գավաթակիր դարձած Մարսելի «Օլիմպիկի» նախագահ Բեռնար Տապիի գլխավերեւում սեւ ամպեր են կուտակվում: Դեռ Քրիստոֆ Ռոբերի հետ կապված խայտառակ պատմության հայտնի դառնալուց երկու օր առաջ փասաբան Բրյունո Ֆլոկոն Տապիին պատկանող յախտուկների սարերի «Տեսյու» ֆիրմայի նախկին նախագահն ու գլխավոր տնօրենը, «Օլիմպիկի» նախագահին մեղադրեց այն բանում, որ նա ֆիրմայի հիմնադրամի մի մասը յուրացրել է բրիտանացի ֆուտբոլիստ Քրիս Ռոդլին Մարսելի թիմ բերելու համար: Գործարքը գնահատվում է մոտավորապես 25 միլիոն ֆրանկ: Այժմ այդ գործով հետաքննություն է սկսվել: Արդեն 1990 թվականին «Օլիմպիկի» հաշիվները հետաքննության առարկա էին դարձել: Այն ժամանակ կասկածներ էին առաջարկվել որոշ խաղացողների տեղափոխման համար: կասկածելի աղբյուրներից ֆուտբոլիստներին հավելավճարներ էին տրվել: Ոստիկանությունը հարցաքննեց նախագահ Բեռնար Տապիին: Գլխավոր տնօրեն ժան-Պիեռ Բեռնեն կալանքի առնվեց: Այդ գործը, սակայն, ավարտին չհասցվեց եւ ի վերջո մոռացության մատնվեց: Անցյալ տարի Մարսելի խաղախումբն Ռոբեր Վիդուրոն հրապարակեց մի զեկուցագիր, որի համաձայն «Օլիմպիկին» խաղախումբ ներգրավելու հաստատված միջոցները հասցեատերերին չեն հասել:

Բացի հիշյալ դեպքերից, 1989-1991 թթ. «Օլիմպիկը» Ֆրանսիայի առաջնություններում եւ Եվրոպայի գավաթի խաղերում արդեն մի քանի անգամ անուղղակիորեն մեղադրվել էր: 1989 թ. մայիսի 20-ին մարսելցիներն առաջին անգամ դարձան Ֆրանսիայի չեմպիոն, 2-1 հաշվով հաղթելով «Օռեր» թիմին: Մի քանի օր անց չորեր էին դասվում, թե մարսելցիները կաշառել են Լենս խաղախումբի ֆուտբոլիստներին, որպեսզի նրանք հաղթեն կամ ոչ ոքի խաղան «Պարի-Սեն-Ժերմեն» թիմի հետ, որը «Օլիմպիկի» միակ ախոյանն էր: Լենսի թիմը խաղն ավարտել էր 0-0 հաշվով: 1990 թ. հոկտեմբերի 21-ին Բորդոյում կայանալիք խաղից առաջ «Բորդոյի» նախագահ Կլոդ Բեսը մարսելցի Վերկուիսին մեղադրեց այն բանում, որ նա փորձել է կաշառել բորդոցի Սենակին: 1990 թ. մարտի 24-ին Բրեստի թիմի նախագահ Իվինեկը մեղադրեց Բեռնար Տապիին, թե նա «Բրեստի» խաղացող Կաբանասին խոստացել է առաջարկել, որպեսզի նա հենց խաղակզքին վիրավորեւ եւ դուրս գա դաշտից: 1990 թ. ապրիլի 25-ին Սենտ Էտիենում կայանալիք խաղից առաջ տեղացի ֆուտբոլիստները դատապարտեցին մարսելցիների ղեկավարներին, որոնք Լորան Ֆուրնիեին խնդրել էին «շատ լավ չխաղալ» հյուրերի դեմ: Երկու ամիս անց Ֆուրնիեն տեղափոխվեց Մարսել: Նույն թվականի մայիսի 12-ին Մարսելում Կան քաղաքի թիմի հետ անցկացվելիք եւ չեմպիոնության համար վճռական խաղից առաջ «Օլիմպիկի» գլխավոր տնօրեն ժան-Պիեռ Բեռնեն, ըստ մրցակիցների տվյալների, զանգահարել է «Կանի» մարզական տնօրեն եւ «Օլիմպիկի» նախկին խաղացող ժան Ֆրանսուա Դոմերգին, որպեսզի վերջինս իր դարպասապահ Մոնտանիեին հանդոգի «սովորականից փոքր-ինչ վատ խաղալ»: Այդ խաղում մարսելցիները հաղթեցին 1-0 հաշվով: 1990 թ. նոյեմբերի 6-ին չեմպիոնների գավաթի 1/8 եզրափակիչի «Օլիմպիկ»-«Լեխ» (Պոզնան) խաղից հետո, որտեղ մարսելցիները հաղթեցին 6-1 հաշվով, լեհական թիմի ղեկավարները ասացին, թե սեփական դաշտում 3-2 հաշվով հաղթած լեհ ֆուտբոլիստները Մարսելում թքեցին, եւ նրանցի կասկածելի հյուրով: Վերջապես, 1991 թ. դեկտեմբերի 15-ին Ֆրանսիայի առաջնության «Օլիմպիկ»-«Ռենն» մրցախաղից հետո «Ռենի» ղեկավարներն ասացին, որ իրենց թիմի հարձակվող Բրազիլացի Բալսազարը եւ դարպասապահ Ռուսոն «նրանցի կասկածելի հյուր են խմել մարսելյան հյուրանոցում»: Վերադարձի ճանապարհի սկզբնական հատվածում երկուսն էլ մեռել են, որի հետեւանքով Բալսազարը ավտովթարի է ենթարկվել:

Անցած տարիներին «Օլիմպիկի» առնչությամբ արտահայտված հիշյալ բողոքներն ու լոր կասկածելի գործերը, սակայն, արագորեն մոռացվել են եւ դրանց առթիվ դատավարություն չի անցկացվել: «Վալանսիեն»-«Օլիմպիկ» խաղից հետո միայն առաջին անգամ պատասխանատու հետաքննություն սկսվեց: Վալանսիենը փորձ էր ֆրանսիայի հյուսիսում: Բազմաթիվ գործարքների այդ քաղաքում մարդիկ մեծ կարեւորություն են տալիս ֆուտբոլին եւ զայրացած են «Օլիմպիկի» հետ կապված խայտառակ գործարքի առնչությամբ: «Վալանսիենի» ղեկավարները հայտարարել են, որ իրենք պատրաստ են լքողներն պայտարել, որպեսզի թիմը վերադառնա բարձրագույն խումբ: Ինչ վերաբերում է «Օլիմպիկի» ղեկավարներին, Բեռնար Տապիին գործարար աշխարհում վայելում հայտնի անձնավորություն է, իսկ մարզաբնտարի մուտք գործեց 1985 թ. Փարիզի ԽՍՀՄ դեսպանատանը կազմակերպված ընդունելությունից հետո, որի մասին «Մզգ» թերթը գրել էր սթ. հուլիսի 2-ի համարում: Այժմ Տապիի վիճակը բարդանում է նրանով, որ «Վալանսիենն»-«Օլիմպիկ» գործին զուգադիպում է «Տեսյու» ֆիրմայի միջոցների մի մասի յուրացման մեղադրանքը: Ի տարբերություն

Շարունակությունը կարդացեք հաջորդ էջում

digitised by A.R.A.R.@

Մեկնաբանություն

ԼԵՀԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԱՌԵՎՏՈՒՐ ՌՈՒԲԼՈ՞Վ

Լեհաստանում ինքնության են առնում Ռուսաստանի հետ կապակցող փոխադարձ հաշվարկներում ազգային դրամներին վերադառնալու հնարավորությունը: Բացառված չէ, որ դոլարով կատարված լեհ-ռուսական առևտրի 2 տարիներից հետո ռուբլին դուրս գա իր շնորհագարդ վիճակից. «Ռուբլու վերադարձը» հոդվածում գրում է «Կոմերսանտ» թերթը: Երկու երկրներն ունեն տարադրամի փոխադարձ դյուրարներ, իսկ դա սահմանափակում է տնտեսական փոխանակման ներարժութային ու ծավալները: Մասնավոր ձեռնարկատերերը նույնպես գանգատվում են փոխարկելի տարադրամի ազատ գումարների դակասից: Այս իրավիճակում Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչներն առաջարկեցին երկու ոլորտությունների առևտրական փոխանակումն իրականացրել ազգային դրամներով:

Այս դրության մանրամասնություններն առայժմ հրապարակված չեն, գրում է թերթը, սակայն հայտնի է, որ «տարանքի դիմաց տարանք» գործարքների դեպքում, որոնք բաց տարածված են փոխադարձ դյուրանագրերում, ռուսական տարրերների արժեքը սահմանվի ռուբլիներով, իսկ լեհականներինը՝ զլոտիներով: Տվյալ դեպքում անաչառ չափանիշ կարող է ծառայել ռուբլու եւ զլոտի ընթացիկ փոխարժեքն ամերիկյան դոլարի նկատմամբ: ԲԻԶՆԵՍ-ՏՍՍՍ

Ուսկոյը վերհիշում է գարանոցային ռնգոյալը: Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովը մեկնաբանեց փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյին ոչ քաղաքակիրթ բանաձեւ վարելու եւ միջոցների մեջ խտրություն չդնելու մեջ: Եթեր հեռարձակված հայտարարության մեջ Կոստիկովը գրում է, որ Ռուսաստանում նախընտրական ոգեւորի ծավալման հետ առանձին քաղաքական գործիչներ տեղափոխում են իրենց գործողությունների բնույթը ընդդիմադիր բանաձեւերի, իսկ երբեմն բացահայտ հայհոյանքի ոլորտը: «Ցավոք, փոխնախագահ Ռուցկոյը նույնպես դուրս եկավ արժանապատվության սահմաններից, նշեց մամուլի քարտուղարը: Կառավարությանը եւ նախագահին հասցեագրված նրա արտահայտություններն էլ ավելի են նմանվում «գարանոցային լեզվի»: Այսպես Կոստիկովը գնահատեց Ռուցկոյի արտահայտությունները, որոնք նա արել է Նովոսիբիրսկ կատարած այցելության ժամանակ: «Համարելով ռուսաստանցի քաղաքացիներին «սրիկաներ, գողեր, արվամոլներ», փոխնախագահը աղայական արհամարանք արտահայտեց ռուսաստանցիների եւ ռուսների հանդեպ, գտնում է Կոստիկովը: ԻՖ



Երբ ուզում եմ թռչել Արմա Արա կամ այնտեղ առաքել բեռներ, երբ մտադրվել եմ Արմա Արայով մեկնել Չինաստան, Վիետնամ, Հնդկաստան եւ Միջին ու Հարավարեւելյան Ասիայի այլ շրջաններ, շտապեցեք:

Ամեն չորեքշաբթի «ՁՎԱՐԹՆՈՑ» օդանավակայանից Հայաստանի «ՊՐՈՄԵԹԵՎՍ» ունիվերսալ բորսան, Երեւանի «ԷՐԵԲՈՒՆԻ» ֆիրմային տնտեսավարկային ասոցիացիան միավորումը Ղազախստանի եւ Հայաստանի ավիատորների աջակցությամբ ՏՈՒ-154 ինքնաթիռով կազմակերպում են կանոնավոր ամենօրյա ուղերթներ (հմ. 19024):

Տոմսերը վաճառվում են Երեւանի օդային հաղորդակցությունների կենտրոնական գործակալության բոլոր տոմսարկղերում:

ENTERPRISE
Mercury
ՁԵՌ
ԸՆՏԵՌՈՒՄ Է
ԲԱՆԿԱՐԱՆԻ
ԱՊԱՀՈՎ ՕԳՏՎԱԾ
ԱՆՆԱԽԱՏԵՍ
ԵՎԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ
Դուք կատարում եք մեծագնաց վճարումը եւ այնուհետեւ ունենալով 3 ամիս ժամանակ վճարելու մնացած գումարը, որից հետո դուք դառնում եք բանկարանի սեփականատեր
Mercury
ԱԶԳ, դիմահանոց 7-րդ հարկ, 711 սենյակ, հեռ. 565649

Փ. Հոքեն, «Ինչպես վարել սեփական գործը»

Նվիրեք այս գիրքը նրանց, ում սիրում եք, Ձեր բարեկամներին եւ հարազատներին: Այսօր էլ գիրքը մնում է ամենագանկալի եւ ամենամատչելի նվերը: Հատկապես այս գիրքը, որը ոչ միայն հաճույք կդատաճի կարդացողին, այլեւ ցույց կտա լրացուցիչ նվաճումներ ստանալու նոր ճանապարհներ ինչպես փոքր ձեռնարկությունների, այնպես էլ սկսնակներին: Գիրքը վաճառվում է թերթի կրպակներում, «Նորք», «Արծվաբեն», «Վասպուրական», «Շինար», «Տարոն», «Սոսկիր», «Խաչատուր Աբովյան» եւ թիվ 1, 2, 52 գրախանութներում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«Հայկական ծրագրեր» ընկերությունն առաջարկում է լավագույն հաշվապահական ծրագրերը ԱՊՀ երկրներում:

Հեռ. 252463, 254758, 584545

KILIKIA T.T.S.

«Կիլիկիա - S.S.U.» - ընկերությունը առաջարկում է վարկերի ընդունման նոր տարբերակ.

Երկարաժամկետ վարկերի դիմաց վճարվում է

50% 3 ամսյա պայմանագրի դեպքում
120% 6 ամսյա պայմանագրի դեպքում
300% 1 տարվա պայմանագրի դեպքում

Կնքված պայմանագրերը մնում են ուժի մեջ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730, 736 սենյակ
Վարկերի ընդունումը կատարվում է ժամը 10⁰⁰-ից 14⁰⁰-ը երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը:

Հեռ. 58-11-10, 59-43-70

PUBLISET

ENTERPRISE Mercury

«Mercury enterprise»-ը

հերթական անգամ անցկացնելով ինվեստիցիոն գործընթացը բնակչությանը հնարավորություն է ընձեռում խնայողությունները պահպանել գերարժեզրկման պրոցեսներից: Ֆիրմայի մասնագետները այս անգամ առաջարկում են ներդրումների հետեւյալ տարբերակները.

1. Եռամսյա ավանդների դեպքում- 15 % ամսական, որը ժամկետի վերջում կկազմի 45 %
2. Վեցամսյա ավանդների դեպքում- 20 % ամսական, որը ժամկետի վերջում կկազմի 120 %

«Mercury enterprise»-ը

երաշխավորում է ձեր գումարների ապահովվածությունը՝ արժեզրկման պայմաններում ամենակայուն ապրանք հանդիսացող անշարժ գույքով:

Երեւան, Սայաթ-Նովայի 19
«Անի» հյուրանոց, 6-րդ հարկ, 636 սենյակ, 594-636

Լուրերի հոսք

Այց Թուրքիա

Հուլիսի 12-16-ը Ռուսաստանի ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատար, ծովակալ Ֆելիքս Գրոմովը կայցելի Թուրքիա: Ինչպես հաղորդեցին ռազմածովային ուժերի մամուլի ծառայությունից, Գրոմովը կհանդիպի Թուրքիայի ոստիկանության նախարարին, գլխավոր շտաբի, ռազմածովային ուժերի հրամանատարներին, կայցելի Հելզուկ ռազմածովային բազան, ռազմածովային ուսումնարանը, մեկ սուզանավ, մեկ նավ: ԻՖ

Գներն ազատ չեն արձակվի

Ռուսաստանի Նախարարների խորհրդի օրերացիվ հարցերով հանձնաժողովը առաջին փոխնախագահ Օլեգ Սոսկովի նախագահությամբ մերժեց «Ռուսաստան» պետական ձեռնարկության առաջարկն ածխի գներն ազատ արձակելու մասին: ԻՖ

Նոր ջարդեր ՀԱՀ-ում

Հարավաֆրիկյան Հանրապետության ոստիկանությունը անցարգելքներ հաստատեց Յոհաննեսբուրգի մոտ գտնվող սեւամորքների 2 արվարձանների շուրջը: Շաբաթավերջին այնտեղ սեւամորքների ջարդ էր կազմակերպվել, որի հետեւանքով սպանվել էին 70 հոգի: Հակաբակ ոստիկանության ջանքերին, երեքշաբթի օրը նույն վայրերում սպանվեց եւս 29 սեւամորք:

Նոր տիպի էլեկտրամոբիլ Եվրոպայի մայրուղիներում

Եվրոպայի մայրուղիներում հայտնվել է «Զում» էլեկտրամոբիլը, որը համատեղ արտադրում են «Ռենո» եւ «Վոլվո» ֆիրմաները: Նոր ավտոմեքենան այլի է ընկնում շարժունակությամբ, այն գործնականում կարող է ազատ դադարել իր սոնակի շուրջ, զարգացնում է մինչեւ 120 կմ/ժ արագություն: Ավտոմեքենայի քաշն է 800 կգ, որից 350 ընկնում է մարտկոցներին, որոնք ապահովում են մինչեւ 260 կմ վազքաշարածություն: Մարտկոցները լիցքավորվում են էլեկտրացանցից 8-10 ժամում:

Ավտոքարի 12 զոհ Ուզբեկստանում

Միայն երեքշաբթի օրը վերջապես հայտնի դարձան հունիսի 15-ին Ուզբեկստանի Ջիզակի մարզի Զաամինի շրջանում տեղի ունեցած ավտոքարի մանրամասնությունները: Ինչպես ԻՖ-ին հայտնեցին հանրապետության ՆԳՆ ոստիկանության վարչությունում, Զաամին-Ուլյանովո ճանապարհի երկրորդ կիլոմետրին լեփլեցուն ուղերթային ավտոբուսը մխրճվել է ուղեւորներով լի բեռնատարի մեջ: Սաստիկ հարվածից երկու մեքենաներն էլ շրջվել են: Վթարի հետեւանքով 12 մարդ զոհվել է, իսկ 34-ին տարել են հիվանդանոց: ԻՖ

Հիմնադրվում է Պրիմորիեի հանրապետությանը

Պրիմորիեի երկրամասի խորհրդի երեկ Վլադիվոստոկում հրավիրած հերթական նստաշրջանում ոստիկանները հայտարարեցին Ռուսաստանի կազմում նոր պետական-տարածքային կազմավորման՝ Պրիմորիեի Հանրապետություն հիմնադրելու մտադրության մասին: Քվեարկությունը տվյալ հարցով տեղի կունենա այսօր: ԻՖ

Գլխավոր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple® Macintosh® համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորումն եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արամյանց 2 Գրանցման թիվ 65. Դասակ 69140. Տրամաքանակ 36 000. Պատվեր 1547 Ստորագրված է տպագրության՝ 7.7.1993

digitised by A.R.A.R.@